Azg
Ազգ
20 ՕԳՈՍՏՈՍ 2004 ՈՒՐԲԱԹ 143 (3074)

Վրացի 6 զինծառայող է զոհվել եւ յոթը վիրավորվել վրաց-օսական հակամարտության գոտում

ԹԲԻԼԻՍԻ, 19 ՕԳՈՍՏՈՍ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վրացի 6 զինծառայող է զոհվել եւ յոթը վիրավորվել անցած գիշեր վրաց-օսական հակամարտության գոտում տեղի ունեցած գնդակոծումների հետեւանքով: Այդ մասին այսօր ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին հայտնել են Վրաստանի պաշտպանության նախարարության տեղեկատվության վարչությունում: Վրացական ռազմական գերատեսչության տվյալներով, «Ինտենսիվ գնդակոծման են ենթարկվել Ցխինվալից ոչ հեռու գտնվող Էրեդվի եւ Վանաթի վրացաբնակ գյուղերը, ինչպես նաեւ Ցխինվալը շրջանցող ճանապարհը, որը միացնում է Մեծ եւ Փոքր Լիախվայի վրացական գյուղերը»: Այս բնակավայրերում ավերվել են մի քանի տներ:

Մյուս կողմից, երեկ կայացած մամլո ասուլիսում Վարդան Օսկանյանը հայտարարեց, թե Հայաստանը մտահոգված է հակամարտության գոտում ստեղծված իրավիճակով եւ ցավում է զոհերի համար: Նա հույս հայտնեց, որ կողմերին այնուամենայնիվ կհաջողվի խնդիրը լուծել բանակցությունների սեղանի շուրջ:

«Եթե հայերը ցանկանան, կարող են գրավել ողջ Ադրբեջանը»

Մինչդեռ Բաքվում հուսով են, թե «մոտակա 25-30 տարիներին Հարավային Կովկասում Հայաստան անունով պետություն չի լինի»

ԹԱԹՈՒԼ ՀՈՎՀԱՆՅԱՆ

«Ինչպե՞ս ազատագրել զավթված տարածքները: Հավանաբար այս հարցի պատասխանը փնտրում են ավելի քան 8 միլիոնանոց Ադրբեջանի յուրաքանչյուր ընտանիքում: Առանց ռազմական գործողությունների Լեռնային Ղարաբաղը եւ հարակից շրջաններն անհնար է ազատագրել: Ռազմական պատմությունը չունի մի օրինակ, ըստ որի ինքնակամ կերպով ազատվում են զավթված տարածքները», իր վերջին համարներից մեկում գրել է Բաքվի «Զերկալոն»:

Ադրբեջանի պաշտպանության նախարարի մամլո խոսնակ Ռամիզ Մելիհովը վերջերս հայտարարեց, թե «մոտակա 25-30 տարիներին Հարավային Կովկասում Հայաստան անունով պետություն չի լինի, քանի որ այսօրվա Հայաստանը ձեւավորվել է ադրբեջանական պատմական տարածքներում եւ մոտ ապագայում այդ հողերը կանցնեն Ադրբեջանի իսկողության տակ»: Թե ինչ ձեւով է Ադրբեջանը գրավելու ամբողջ Հայաստանը, Մելիհովը չի մանրամասնել:

Նախագահ Իլհամ Ալիեւը եւ Ադրբեջանի բարձրագույն սպայական կազմը հրապարակավ հայտարարում են, որ ադրբեջանական բանակն ավելի մարտունակ է, քան հայկականը, եւ եթե խաղաղ բանակցություններն արդյունքներ չտան, Ադրբեջանը սիրված կլինի Ղարաբաղի եւ հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքների խնդիրը լուծել ռազմական ճանապարհով: Նկատենք, որ Բաքվի իշխանությունները սկսած 1988 թ.-ից, երբ սկսվեց ղարաբաղյան պայքարի նոր փուլը, խնդիրը հետեւողականորեն փորձել են լուծել ռազմական ճանապարհով:

Ռուսաստանի հատուկ հանձնարարություններով նախկին դեսպան, 1992-96 թթ. ղարաբաղյան հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի Ռուսաստանի ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովը վերջերս իր հոդվածներից մեկում գրում է, որ հակամարտող կողմերը բազմիցս հնարավորություն ունեին դադարեցնելու, հրադադար հաստատելու կամ ընդհանրապես վերջ տալու ռազմական գործողություններին տակավին 1992 թ.: Սակայն, ինչպես հոդվածում պնդում է Կազիմիրովը, հիմնականում ադրբեջանական կողմն էր խախտում զինադադարը՝ հույս ունենալով Ղարաբաղի խնդիրը կարգավորել ռազմական ճանապարհով, այսինքն՝ այդ տարածից դուրս քշել բոլոր հայերին:

Տես էջ 8

Ըստ Էլմար Մամեդյարովի, «տարածքային ամբողջականության» հարցը անհերքելի է

Բայց ինքնորոշման հարցը կարող է քննարկվել

ՄՈՍԿՎԱ, 19 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ես, որպես արտգործնախարար, ձեռնամուխ եմ լինելու Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորմանը», այսօր Մոսկվայում իր այցի առթիվ կազմակերպված մամլո ասուլիսի ժամանակ հայտարարել է Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը: Բայց, նրա խոսքերով, միջազգային հանրությունը պիտի հասկանա որոշի, որ տարածքների գրավումը հարցի միջազգային լուծում չէ:

Մամեդյարովը նաեւ հավելել է, որ Հայաստանը գրավել է տարածքներ, որոնք չեն մտնում Լեռնային Ղարաբաղի տարածքի մեջ: «Մինչեւ այդ տարածքներ չվերադառնան դրանցից դուրս եկած մարդիկ, դժվար է հույս ունենալ, որ այս հարցը կարող է լուծվել», ասել է Ադրբեջանի արտգործնախարարը:

Նա նշել է, որ երեկ Սերգեյ Լավրովի հետ հանդիպման ժամանակ Ղարաբաղի խնդիրը մանրամասն չի քննարկվել: Ըստ Մամեդյարովի, տարածքային ամբողջականության սկզբունքն անհերքելի է, բայց այլ հարցեր, այդ թվում ինքնորոշման հարցը Ադրբեջան-Հայաստան բանակցությունների ժամանակ կարող է քննարկվել:

«ԵՅՈՒ ՅՈՐՔ ԼԱՅՖ»

Դատարանը հոգուս հայերի է կարգավորում հարցը

«Աստիճյթեդ պրես» գործակալությունը Լոս Անջելեսից հաղորդում է, որ Մ. Նահանգների շրջանային դատարաններից մեկում ի վերջո ավարտվել է Օսմանյան կայսրությունում հայերի ձեռք բերած եւ առ այսօր չվճարված ապահովագրական տոմսերի դիմաց 20 մլն դոլարի փոխհատուցում ստանալու «Նյու Յորք լայֆի» դեմ բացված դատական գործը: Նախագահող դատավոր Ջրիսթինա Անայդերը հաստատեց ապահովագրական ընկերության եւ զոհերի հետնորդների միջեւ ձեռք բերած իրավական համաձայնագիրը, որը համարվում է առաջինը՝ կազմված Հայոց ցեղասպանության հետ:

«Որպես փաստաբաններ եւ հետնորդներ մենք կարողացանք մի քայլ եւս անել ցեղասպանության ճանաչման գործում», նշել է Բրայան Կաբատեկը, որն ամերիկահայ է, ինչպես իր գործընկեր Մարկ Կիրակոսը:

«Երկար, տքնաջան ճանապարհ էր, եւ ուրախ եմ, որ դրական ավարտ ունեցավ», ասել է 88-ամյա Մարտին Մարությանը, որը գլխավոր հայցվորն էր այս դատական գործում:

Հիշեցնենք, որ 1880-ականներից սկսած «Նյու Յորք լայֆը» 8 հազար ապահովագրական տոմսեր էր վաճառել Օսմանյան կայսրությունում, որոնց կեսից մի փոքր պակասը՝ հայերին: Գործի հարուցումից հետո ընկերությունը կարողացել է հայտնաբերել նրանց մոտ մեկ երրորդին: Համաձայնության դրույթներով 11 մլն դոլար է վճարվելու 2400 ապահովագրական տոմսերի դիմաց: Մոտ 3 մլն հատկացվելու է հայկական բարեգործական կազմակերպություններին, 2 մլն դոլարը ծածկելու է վարչական ծախսերը, իսկ մնացած 4 միլիոնը վճարվելու է փաստաբաններին:

Հ. Օ.

Իրաքցիներն սպառնում են մահապատժի ենթարկել ամերիկացի լրագրողին

Իրաքցի գրոհայիններն ԱՄՆ-ից պահանջում են 48 ժամվա ընթացքում ամերիկյան զորքը դուրս բերել Իրաքի մահմեդականների սրբազան քաղաք Նաջաֆից: Հակառակ դեպքում նրանք սպառնում են մահապատժի ենթարկել առեւանգված ամերիկացի լրագրող Մայք Գարենին:

«Ալ Ջազիրա» արաբալեզու հեռուստաընկերությունը չորեքշաբթի երեկոյան ցուցադրել է իրաքցի գրոհայինների վերջնագրային ելույթի տեսագրությունը: Ոյթեր գործակալությունը հաղորդում է, որ տեսաերիզի վրա երեւում են դիմակավոր 5 զինյալներ, ինչպես նաեւ ծնկաչոք ամերիկացի լրագրողը: «Նահատակների բրիգադներ» անունը կրող խմբավորումը դիմակավոր գրոհայիններ հայտարարել են, որ լրագրող Մայք Գարենը գերի է ընկել անցյալ շաբաթ Նասիրիա քաղաքի մոտ:

Պ. Ք.

ՀԱՄԱՌՈՏ

Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների 4-րդ հանդիպումը Պրահայում օգոստոսի 29-30-ին

ԵՐԵՎԱՆ, 19 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հանդիպումն Ադրբեջանի իր պաշտոնակցի՝ Էլմար Մամեդյարովի հետ, Վ. Օսկանյանի խոսքերով, կկայանա «թերեւս այս ամսվա վերջին՝ 29-30-ին, Պրահայում»: Այդ հանդիպումը, ինչպես նշեց Վ. Օսկանյանը, «նախատեսված է, բայց դրանից հետո Ադրբեջանի արտգործնախարարը որոշ հայտարարություններ արեց, չգիտեմ, դրանք գործի կդնի, թե ոչ, բայց եթե ամեն ինչ նորմալ ընթանա եւ փոփոխություններ չլինեն, ամսվա վերջին մենք Պրահայում կհանդիպենք եւ երկխոսությունը կշարունակենք», ավելացրեց նախարարը: Ըստ նրա, այդ հանդիպումից ակնկալիքը միայն այն է, որ հայկական կողմը կարողանա շարունակել այն, ինչ-որ սկսել է, եւ հասցնել դա իր ավարտին՝ ի վերջո հստակություն մտցնելով, թե ինչ հիմքի վրա են երկու երկրների միջեւ բանակցությունները շարունակվելու:

Ավելացնենք, որ դա կլինի երկու երկրների արտգործնախարարների 4-րդ հանդիպումը:

Ադրբեջանի ոստիկանությունը մեղադրում է ճապոնացուն Հայաստանի օգտին լրտեսության մեջ

ԵՐԵՎԱՆ, 19 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԻՆՖՈ: Բաքվում շարունակվում է «հայ լրտեսների» որոնումը: Իսկական հայերի բացակայության պատճառով որպես այդպիսին է ընդունվել մի ճապոնացի:

Ինչպես հաղորդում են Բաքվի ԶԼՄ-ները, ադրբեջանական ոստիկանությունը ձերբակալել է Ադրբեջանի իրավապահ մարմինների հավաստմամբ Հայաստանի օգտին լրտեսությամբ զբաղվող ճապոնիայի քաղաքացու: Ձերբակալման պահին 28-ամյա ճապոնացին լուսանկարում էր «Ադրբեջան» հյուրանոցը, ինչպես նաև մոտակա շենքերը: Ճապոնացու համար ճակատագրական դեր է խաղացել այն փաստը, որ նա հանդիսանում է Երեւանի պետական համալսարանի առաջին կուրսի ուսանող: Վերջինս Ադրբեջան էր ժամանել որպես զբոսաշրջիկ, նշում է աղբյուրը:

Բջջային կապի ոլորտում հավասարաբար կլինի եւս մեկ օպերատոր

Իսկ տվյալների փոխանակման դեպքում սահմանափակում չի դրվի

Պատասխանելով «Արմենտելի» շուրջ ընթացող բանակցությունների մասին հարցին, արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը նախ հրաժարվեց մանրամասներ հայտնել, բայց ճեղքագրության ավարտից հետո այնուամենայնիվ պատասխանեց որոշ հարցերի: Մասնավորապես մեր հարցին, թե «Նախարարը վստահ է, որ բանակցությունները հունական OTE-ի հետ կավարտվեն նախանշված ժամկետում, այսինքն սեպտեմբերի 28-ին», նա պատասխանեց, որ ամենայն հավանականությամբ դա այդպես կլինի: Իսկ եթե բանակցությունները անարդյունավետ լինեն, ապա, Դավիթ Հարությունյանի հավաստմամբ, ուժի մեջ կմտնի կառավարության համապատասխան որոշումը, որը ենթադրում է «Արմենտելի» բացառիկ իրավունքների վերացումը բջջային կապի եւ տվյալների փոխանակման ոլորտում: Նա տեղեկացրեց, որ դատական գործընթացը ՀՀ կառավարությունն ընդդեմ OTE-ի եւ վերջինիս հակընդդեմ հայցն ընդդեմ ՀՀ կառավարության, շարունակվում է, իսկ «Արմենտելը» հրաժարվել է իր դատական պահանջից:

Նախարարը նշեց նաեւ, որ տվյալների փոխանակման ծառայությունները հավասարաբար չեն տրվի երկրորդ օպերատորին, եւ այստեղ կարող են լինել անսահմանափակ թվով օպերատորներ: Բջջային կապի համար երեւի սահմանափակում դրվի եւ թույլ տրվի մեր շուկա մուտք գործել եւս մեկ օպերատորի, որը պետք է աշխատի որոշակիորեն սահմանված տիրույթում: Դա կարվի միջազգային մրցույթի ճանապարհով: Դավիթ Հարությունյանը որեւէ կերպ չհիմնավորեց, թե ինչու է նման սահմանափակում ենթադրվում բջջային կապի համար:

Ա. Մ.



ԸՆԹԱՑԻԿ

ՍՍՈՒԼԻՍ

Օրենքն առնչվելու է մեզանից յուրաքանչյուրին

Ըստ արդարադատության նախարարի դա հակակոռուպցիոն ծրագրերի մեխերից մեկն է լինելու

Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի երեկ ներկայացրած «Վարչարարության հիմնադրույթների եւ վարչական վարույթի մասին» օրենքի նախագիծն առնչվելու է Հայաստանի յուրաքանչյուր բնակչի, քանի որ կարգավորում է քաղաքացիների եւ վարչական մարմինների հարաբերությունները: Ավելին, կառավարության հաստատած այս փաստաթուղթը նախարարը համարեց հակակոռուպցիոն ծրագրերի

հիմնական մեխերից մեկը՝ առաջարկելով լրագրողներին դա առավել հանգամանորեն ուսումնասիրել եւ ներկայացնել հասարակությանը:

Օրենքը, որ ուժի մեջ պետք է մտնի տարեվերջին, սահմանում է, թե ի՞նչ է նշանակում վարչական վարույթ, ինչպես է այն սկսվում, քաղաքացին ինչպես պետք է պաշտպանի իր իրավունքները եւ այլն: Դավիթ Հարությունյանն անդրադարձավ օրենքի առանձին դրույթներին: Մասնավորապես նա հայտնեց, որ ձեւական խախտումների դեպքում, եթե քաղաքացուն վերաբերող գործի բովանդակությունն անփոփոխ է մնացել, ապա այն չի կարող կրկին վերադարձվել քաղաքացուն, պարտադրելով նորից անցնել նույն վարչական շրջափուլը:

Հաջորդը, նվազեցվելու են հայեցողական լիազորությունները, վարչական մարմիններին արգելվելու է անհավասար մոտեցում ցուցաբերել քաղաքացիների նկատմամբ: Այսինքն, եթե որեւէ մեկն ինչ-որ հարցի առնչությամբ դիմել է վարչական մարմնին եւ դական պատասխան ստացել, ապա վարչական մարմինն իրավունք չունի մերժելու նույն վիճակում գտնվող նույն հարցով դիմած մեկ այլ քաղաքացուն: Նախարարը որպես օրինակ բերեց հողահատկացման դեպքերը, երբ մարդիկ կանխավ գիտեն, որ նման խնդրանքով դիմելու դեպքում մերժվելու են, այդ պատճառով փնտրում են այլ ուղիներ:

Կամ «մեռած օրենսդրությունը» որեւէ մեկի նկատմամբ կիրառելու դեպքում վարչական մարմինը այն պետք է կիրառի նաեւ մյուսների նկատմամբ: Այսինքն պետք է ապացուցի, որ իր կատարած քայլը քաղաքականության փոփոխությանն է վերաբերում: Մասնավոր օրինակ բերելով, նախարարը նշեց, որ եթե արգելված կայանատեղում մշտապես ավտոմեքենաներ են կանգնած, եւ վարչական մարմինը հանկարծ տուգանում է նրանցից որեւէ մեկին, ապա նա նույն մոտեցումը պետք է կիրառի նաեւ մյուսների նկատմամբ: Հակառակ դեպքում քաղաքացին կարող է կամ վարչական կարգով ապօրինի համարել նրա որոշումը, դիմելով տվյալ պաշտոնյայի վերադասին, կամ դա պետք է կատարի դատական կարգով: Եթե համաժամանակյա դիմում է կատարվում երկու ուղղությամբ, ապա վարչական կարգով պաշտպանությունը դադարեցվում է եւ սկսում է գործել դատական պաշտպանությունը:

«Ազգի»-հարցին, թե «օրենքը նախատեսո՞ւմ է, որ բացի որոշումն ապօրինի ճանաչելուց, պատասխանատվություն կիրառվի այն կայացրած վարչական մարմնի նկատմամբ», Դավիթ Հարությունյանը պատասխանեց, որ պատասխանատվությունը կրում է պետությունը: Պետությունը փորձելու է իր կամ քաղաքացու կրած վնասը գանձել խախտումը թույլ տված պաշտոնյայից:

Մի խոսքով, այս օրենքը կարծես թե հնարավորություն է ստեղծում որոշակիորեն սահմանափակելու չինովնիկական կամայականությունները, բայց ժամանակից շուտ ոգեւորվելու կարիք, կարծում ենք, չկա: Չմոռանանք, որ մեր պաշտոնյաները անմիջապես գտնում են անգամ ամենալավ մշակված օրենքը հօգուտ իրենց վնասազերծելու եւ սեփական շահից չզրկվելու ճանապարհները:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԵՄԿ-ն պարտավորվել է գրաֆիկներին համապատասխանեցնել թաղամասերի ջրամատակարարումը

ԵՐԵՎԱՆ, 19 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հանձնարարականով «Երեւանի ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերությունը պարտավորվել է մոտ օրերս իր հրապարակած գրաֆիկներին համապատասխանեցնել մայրաքաղաքի թաղամասերի ջրամատակարարումը: Այս մասին տեղեկացրեց հանձնաժողովի լիցենզավորված գործունեության մոնիթորինգի վարչության պետ Մկրտիչ Զալայանը: Ըստ նրա, հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ հուլիսի 8-ի եւ 9-ի ուսումնասիրություններով պարզվել է, որ ջրամատակարարման գրաֆիկները չեն պահպանվում 6 համայնքների ջրագծերի 35 կետերից 22-ում: Դրանց ջրամատակարարման գրաֆիկներից շեղումները կազմել են 1-21 ժամ: Մասնավորապես Աջափնյակ համայնքի 11,15,16 եւ 17 թաղամասերում, Անասավանի առանձնատներում արձանագրվել է 3-12 ժամ շեղում: Այդ թաղամասերի բարձրահարկ շենքերում խախտված է եղել նաեւ օրական նվազագույնը 4 ժամ ջրամատակարարման պահանջը:

Այսօր կդադարեցվի Նոր Նորքի, Մարաշի, Զեյթունի եւ Ավան Առինջի ջրամատակարարումը

ԵՐԵՎԱՆ, 19 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Օգոստոսի 20-ին, ժամը 10-ից մինչեւ 24-ը կդադարեցվի Նոր Նորքի 1; 2; 3; 4; 6-րդ զանգվածների, ինչպես նաեւ Մարաշի, Զեյթունի եւ Ավան-Առինջի ջրամատակարարումը: Ինչպես տեղեկացրին Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ընկերության մամուլի գրասենյակից, անջատումները կապված են ջրաշինարարական աշխատանքների հետ:

Մինչեւ օգոստոսի 29-ը՝ ԱԺ պատգամավորական թափուր տեղի համար ընտրությունների օրը, եղվարդի թիվ 44 ընտրատարածքում կրքերն այնքան են շիկացել, որ բացահայտորեն դուրս են սահել լոկալ պայքարի շրջանակից: Բարձրաձայնվում են թեկնածուներից 2-ի բարձրաստիճան հովանավորների անունները՝ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյան եւ հանրապետության գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյան:

Երեկ «Փակագիծ» ակումբում հանդիպում էր նախատեսվել թիվ 44 ընտրատարածքի պատգամավորության բոլոր թեկնածուների հետ, բայց հայրենակցական միության հովանավորած (միության պատվավոր նախագահը հանրապետության գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն է) թեկնածու, «Լավանդա» հոլդինգի նախագահ Արայիկ Հայրապետյանի միջեւ է կենաց ու մահու պայքարը: Մյուս 2 թեկնածուները՝ Աղասի Գասպարյանն ու Գալուստ Նավասարդյանը, Բաբկեն Մարգարյանի բնորոշմամբ, պարզապես դրածներ են:

Խոշոր խաղաքարտով գլամարտում հաղթելու ինչ հույսեր ունի պատգամավորության այս մյուս թեկնածուն, որ, իր ասելով, ոչ ֆինանսական ներդրում է արել, ոչ հարում է որեւէ հայրենակցական միության հովանավորած (միության պատվավոր նախագահը հանրապետության գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն է) թեկնածու, «Լավանդա» հոլդինգի նախագահ Արայիկ Հայրապետյանի միջեւ է կենաց ու մահու պայքարը: Մյուս 2 թեկնածուները՝ Աղասի Գասպարյանն ու Գալուստ Նավասարդյանը, Բաբկեն Մարգարյանի բնորոշմամբ, պարզապես դրածներ են:

Խոշոր խաղաքարտեր

ԱԶԳ

Մեր կյանքից

ՍՄԲՈՒՅԹԻՆ ԽՉՍԵԿՍՐ

Հանգստյան տների ամառային անհանգստությունները

Ամեն ինչ սկսվեց տուրիստական գործակալություններից. սրանք ամառային հանգիստը կազմակերպող եւ տեղեկություններ տվող հիմնական միջոցն են այս օրերին: Բայց փորձիր այդ հանգիստը կազմակերպել համեմատաբար սուղ միջոցներով եւ կունենաս այսպիսի տպավորություն-պատկեր:

Այս օրերին հանգստյան տներն իրենց սեզոնային անհանգստությունն են ապրում: Նույնիսկ ամենատարրական եւ անհրաժեշտ պայմանների բացակայությամբ դրանք բավականին այցելուներ ունեն: Երեւանյան սաստիկ շոգը պատճառ է դառնում, որ մարդիկ հաշվի չառնելով այդ վիճակները, մի քանի օրով ապաստանեն բնության գրկում, իսկ հիմնական մասը փնտրում է մատչելի գներով հանգստավայրեր:

Մի ամջողջ օր տուրիստական գործակալություններ զանգահարելուց հետո «Արա Մարության» գործակալությունից տեղեկանում ես Սեւանի ափի հանգստյան տներից մեկի պայմաններին: Ամենամանրամասն հարցերի բավարար պատասխաններ ստանալով՝ ճամպրուկները պատրաստում ու մեկնում ես՝ օրական 4000 դրամի արժողության (ներառյալ սնունդը) հաշվարկով:

Իրականությունը, սակայն, միանգամայն այլ է: «Ծիծեռնակ» հանգստյան տունը հյուրընկալության ամենատարրական մակարդակն իսկ չի ապահովում: Հայավարի, տնային տնտեսուհիներին հատուկ թթված դեմքերով սպասուհիներն առաջին վանող տարրերն են: Սակայն մինչ այդ՝ ճանապարհի մասին: Երեւանից Սեւանի «Ծիծեռնակ» հասնելու համար (անձնական օգտագործման մեքենայի բացակայությամբ) եւ ոչ բնավ ռոմանտիկ իրավիճակներ ստեղծելու մտադրությամբ, օգտվում ես գնացքից, վերոնշյալ տուրիստական գործակալության խորհրդով, որովհետեւ գնացքը կանգառում է նաեւ անմիջապես «Ծիծեռնակի» մոտ: Կիսամաբ վագոններով, ջարդված ապակիներով գնացքը շարժվում է բաց դռներով, որոնց առջեւով՝ երեխաներ են գնում-գալիս, գյուղմթերքներով բեռնավորված, սոխ ու սխտորի, հրնահոտերով, ամենակենցաղային խոսակցություններով, հրմշտոցներով ու գոռգոռոցներով լցված ուղեւորներով, ովքեր պարկերի ու կողովների տեղի համար իրար վիրավորում, միմյանց նայում են տարօրինակ, վայրենի հայացքներով, տենդագին, ասես աշխարհի վերջն է: Դա դեռ մի կողմ: Ճիշտ վայրում կանգառելը լուրջ խնդիր է դառնում: Առաջին անգամ ես այցելում, հարցնում ես տեղաբնակ ուղեւորներին, չգիտեն, թե չեն ուզում պատասխանել, ուղեկցորդ-տոմսավաճառը հանգստացնում է, թե կասի, սակայն ստեղ-ստեղ անհետանում է: Հարցնում ես մի երիտասարդի. «Ուղեկցորդից հարցրի, ասաց կասեմ, բայց այստեղ չի»: «Դրան ո՞ւր ես հարցնում, տարոր ա (բութ է), երեկ հարցնում եմ մինչեւ «Ֆլամինգո» ափը տոմսն ի՞նչ արժե, ասում է՝ 20 դրամ, այսօր, թե 50, բայց ո՞նց է այդպես տարբեր է, ասում է, թե չգիտեմ՝ «Ֆլամինգոն» ինչ ափ է»: Բարեբախտորեն ուղեւորների մեջ եղած ոսիկանը վստահորեն արձագանգում է հարցին, իջնում ես նշված վայրում, զարզվում է, որ դա «Արեւիկ» հանգստյան տունն է եւ մինչեւ «Ծիծեռնակ» 1,5 ժամվա ոտի ճանապարհ կա (շուրջ 5 կմ): Մոլորվում ես, մեքենաները չեն կանգնում, նույնիսկ ճանապարհի կիսադատարկ ավտոբուսը: Որեւէ ցուցատախտակ չկա եւ առհասարակ Հայաստանի ճանապարհներին դրանք գրեթե բացակայում են: Անծանոթ վարորդի, ուղեւորի, ճամփորդի համար կատարյալ անորոշություն է ստեղծում: Պատմամշակութային հուշարձան, բնակավայր, հանգստյան տուն ցուցանող որեւէ նշում ճանապարհին չես գտնի:

Նկատենք նաեւ, որ Երեւանի Զեյթուն թաղամասի ուսանողական հանրակացարանի գլխավոր մասնաշենի մոտից մինչեւ «Ծիծեռնակ» հանգստյան տուն գնացքի տոմսի արժեքը 320 դրամ էր (տոմսակի վրա գրառված), իսկ վերադարձին՝ նույն ճանապարհի համար՝ 380 դրամ:



Իսկ հանգստյան տունը սոդոմ-գոմոր է հիշեցնում: Սենյակները անբարեկարգ են, սպասուհիները չեն մաքրում, տաք ջրի մասին խոսք լինել չի կարող, մասնաշենից 20-30 մ հեռավորությամբ առանձին անաշտ քարերով կառույցը բաղնիքանման մի բան է, եւ ջուրը տաքացնելու համար նախապես մեկ օր առաջ հարկավոր է զգուշացնել: (Ի դեպ, ավելի ողորմելի վիճակում է գտնվում «Բյուրական» հանգստյան տունը՝ անհիշելի ժամանակներից վերանորոգում չտեսած, ծեփաթափ պատերով, ասիճաններն կամ մռայլ միջանցքների այս ու այն կողմերում կուտակված աղբով, նորմալ մարդու համար վիրավորական համարներով՝ թեկուզ նվազագույն գումարի պայմաններով: Լուսամուտագոգի կեղտն ու փոշին, ապակիների արանքների սարդոսայների առատությունը, անուններով հիշատակված գրոտված պատերը, կեղտոտ հատակը, ոչ թե հին, այլ պարզապես ջարդված մահճակալները, կեղտոտ, անհարմար լվացարանը, պատառոտված սպիտակեղենը պարտադրում են անձնական իրերը չհանել ցելոֆանների միջից, իսկ տուն վերադառնալուց ախտահանել դրանք... Այստեղ դրան կողքին իսկ անտարբեր էր. աղբը կուտակվում է ուղղակի միջանցքում եւ հանգստացողները գերադասում են վերեւից նետել դատարկ շշերը, տոպրակները, բաժակները:

Վերադառնանք Սեւանի «Ծիծեռնակին»: Սնունդը սննդի նման չէ, ճաշարանում սեղանները համարներ չունեն, որեւէ բան խնդրելուց (շաքարավազ, հաց) մատնացույց են անում մոտակա խանութը, այնպես որ այդ 4000 դրամը սիմվոլիկ գումար է դառնում, կամ նախնական:

Լողա՞փը... կեղտոտ եւ ամենակարետորները՝ փրկարարներն իսպառ բացակայում են, բույսերին (փրկօղակ) փոխարինում են կարմիր ներկած կոկա-կոլայի շշերը, լողափի մանրավազի փոխարեն (ինչի մասին հավաստիացրել էին տուրիստական գործակալություններում) խոշոր քարեր, այնպես որ ջրից չորեքթաթ ես դուրս գալիս, որ ծնկներդ, մաշկդ ափամերձ քարերը չծակծկեն:

Միջավայրը... Սա առդեն մի այլ բան է: Սա շուկա է, խայտաբղետ տոնավաճառ: Մսեղեն կանայք ու տղամարդիկ, ուռած, փքված, ինքնագոհ, ինքնասիրահարված, ճոխ մեքենաներով ժամանում ու տեղ հասնելուն պես միացնում են մագնիտոֆոնները, ու սկսվում է հայկական «սիմֆոնիան», այսինքն ռաբիսը: Անգամ գիշերը հանգստանալ չես կարող: Աջից Թաքա Սիմոնյան, ձախից՝ Թաքուշ Ավոյան, Բոդդ, մի կողմից առաբական, մի այլ կողմից թուրախառն մեղրածոր նեյնիմներ, մուղամ... Երաժշտական այս տարբերությունը («Ինտուրիստը») հայկական ԽՍՀ կառավարության անդամի կարգավիճակով: Այդ տարիներին ավարտին հասցվեց «Արմենիա» հյուրանոցի երկրորդ մասնաշենի շինարարությունը, վեր խոյացավ երաժշտական կոմեդիայի թատրոնի շենքը (հաշվի առնելով մշակութային հասատությունները կառուցելու արգելքը, թատրոնը կառուցվում էր «Ինտուրիստի» կոնֆերանս-դահլիճ անվանումով), արտասահմանյան տուրիզմը զգալիորեն ամրապնդեց իր դիրքերը իբրեւ հանրապետության ժողովրդական տնտեսության հզոր ճյուղ:

1989 թ., երբ «Ինտուրիստի» վարչությունները միութենական հանրապետություններում լուծարվեցին (դա արվեց նաեւ Հայաստանում), ջանցքում եւ հանգստացողները գերադասում են վերեւից նետել դատարկ շշերը, տոպրակները, բաժակները:

Վերադառնանք Սեւանի «Ծիծեռնակին»: Սնունդը սննդի նման չէ, ճաշարանում սեղանները համարներ չունեն, որեւէ բան խնդրելուց (շաքարավազ, հաց) մատնացույց են անում մոտակա խանութը, այնպես որ այդ 4000 դրամը սիմվոլիկ գումար է դառնում, կամ նախնական:

Լողա՞փը... կեղտոտ եւ ամենակարետորները՝ փրկարարներն իսպառ բացակայում են, բույսերին (փրկօղակ) փոխարինում են կարմիր ներկած կոկա-կոլայի շշերը, լողափի մանրավազի փոխարեն (ինչի մասին հավաստիացրել էին տուրիստական գործակալություններում) խոշոր քարեր, այնպես որ ջրից չորեքթաթ ես դուրս գալիս, որ ծնկներդ, մաշկդ ափամերձ քարերը չծակծկեն:

Միջավայրը... Սա առդեն մի այլ բան է: Սա շուկա է, խայտաբղետ տոնավաճառ: Մսեղեն կանայք ու տղամարդիկ, ուռած, փքված, ինքնագոհ, ինքնասիրահարված, ճոխ մեքենաներով ժամանում ու տեղ հասնելուն պես միացնում են մագնիտոֆոնները, ու սկսվում է հայկական «սիմֆոնիան», այսինքն ռաբիսը: Անգամ գիշերը հանգստանալ չես կարող: Աջից Թաքա Սիմոնյան, ձախից՝ Թաքուշ Ավոյան, Բոդդ, մի կողմից առաբական, մի այլ կողմից թուրախառն մեղրածոր նեյնիմներ, մուղամ... Երաժշտական այս տարբերությունը գիկոմեդիան օրինիբուն մաշում է Սեւանի քարքարոտ ափերը. մյուս կողմից էլ անեկդոտներ-հռհռոցները, անբովանդակ, տխմար խոսակցությունները զառանցանքի պես խոցոտում են բնության հրաշք մարմինը:

Այստեղ հիշատակենք նաեւ սրանց կազմակերպած բացօթյա խնջույքներն անտառներում: Ուտում-խմում, տխմարանում ու հետո անասունի պես իրենց կերած ոսկորի կտորները, սմբուկի, լոլիկի կեղեւները, բաժակները, շշերն ու տոպրակները այս ու այն կողմ տարածած, թողնում, հեռանում են: Այս մարդիկ, հետ նայելու սովորություն չունեն: Երեկ մեքոյի երիտասարդական կայարանում կխված մեջքով տարեց մի կին հատակն էր մաքրում, 5-6 անգամ՝ ծայրեծայր, մանրակրկիտ սրբելով: Կարիքը, մտածում էի, ստիպել է այս ծեր կնոջը այս վիճակում, այս ժամին նման աշխատանք անել, երբ հիշ անց լսեցի, թե ինչպես է նա թեեւ բարբառային շեշտադրումով, բայց շատ գրագետ հայերենով դիտողություն անում չգիտես որ համալսարաններից մեկում սովորող մի երիտասարդի (ինքն ասաց), որը փորձում էր «կախվել» մետրոյի կայանի կամարների փայտերից: «Չգիտես, թեզ չե՞ն սովորեցրել, թե փայտը լեզու ունենար, կասեր, որ իրեն ցավեցնում ես, ինչո՞ւ ես ուզում փչացնել, պոկել, հոհռում, ցատկոտում ես, այս ի՞նչ դատարկություն ես սացել. հազար մարդ կա տարբեր երկրներից այսօր մեր քաղաքում, ամոթ չէ՞, մեր մասին ի՞նչ կմտածեն»: Մարող ծեր կինը վայելուչ հայերենով այնպես տեղը դրեց նորելուկ համալսարանականներին, որ սրանք պարանձվեցին: Ծառերի տակ ու խոտերի վրա իրենց կերածի մնացորդն ու թերմացը թողնողներին ո՞վ պետք է ասի՝ ամոթ չէ՞, խո՞տը, ծա՞ռը, որոնք հաստատ վիրավորված են, բայց հնար չունեն, ու այդ անպատկառ հետքերը մարել թողնում են քամուն, անձրեւին...

Իսկ Սեւանը գիշերը սքանչելի է՝ Գեղամա լեռների հսկողությամբ, ջրերի իմաստուն ծփանքով, լուսնի արծաթափայլով, երբ չկա ցերեկային սին աղմուկը, երբ պաղարյուն ջրերը նվագակցում են գիշերային լռության իմաստուն խորհրդին՝ լուսնային լուրթ ունկնդրությամբ: Եվ սա այն միակ վայելքն ու հանգիստն է, որ պարգեւում է միայն առարկայորոշ բնությունը՝ անխառն, մարդուց հեռու...

ՄԵԼՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Հենրիկ Լիլոյան. վառ, պայծառ հիշատակ

Ուղիղ 5 տարի առաջ կյանքից հեռացավ հայտնի լրագրող, պատմաբան, դիվանագետ ու պետական գործիչ Հենրիկ Լիլոյանը: Այդ մարդը, որի կյանքն ու գործունեությունը բաժին ընկան երկու հասարակարգերի խզվածքին, ավաղ, այդպես էլ ըստ արժանվույն չգնահատվեց, պատճառ ծառայեց չօգտագործվեց հոգուս մեր երկրի շահերի:

Հ. Լիլոյանն ապրեց ընդամենը 67 տարի: Նրա կենսագրության սկիզբը կապված է 50-ական թթ. խրուշչովյան ձնհալի հետ. Կարմիր բանակի սպայի զավակը բարձրագույն կրթություն է ստանում Երեւանի պետական համալսարանում եւ որպես աշխատանքային ուղի ընտրում լրագրությունը: Եղել է հանրապետական «Կոմունիստ» ռուսալեզու պատասխանատու քարտուղարի սեփական թղթակիցը Սեւանի ավազանում (Կամոյի, Մարտունու եւ Վարդենիսի շրջաններ), Հայաստանում «Մեդիցինսկի ռաբոչնիկ» («Բուժաշխատող») թերթի սեփական թղթակից, կրկին «Կոմունիստի» խմբագրություն:

1963 թ. նրան աշխատանքի են հրավիրում ՀԿԿ կենտկոմ, ուր մասնավորապես եղել է կենտկոմի առաջին քարտուղար Յակով Զարոբյանի օգնականը: 1967 թ. ավարտելով ԽՄԿԿ կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրան, Հ. Լիլոյանն իր թեկնածուական թեզը նվիրում է անցյալ դարասկզբի հայ մամուլի պատմությանը: Հետագա տարիներին նա աշխատում է ՀԿԿ կենտկոմի արտասահմանյան կապերի նորաստեղծ բաժնի վարիչի տեղակալ՝ համակարգելով հանրապետության միջազգային գործունեության ասպարեզը:

1970-75 թթ. թերեւս Հ. Լիլոյանի կենսագրության ամենափայլուն էջերն են: Այդ տարիներին նա եղել է Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպանության առաջին քարտուղար եւ այդ պատասխանում, ի թիվս այլ պարտականությունների, զբաղվել մեր հանրապետության եւ ֆրանսահայ համայնքի կապերով: Այդ ժամանակաշրջանի նրա աչքի ընկնող գործերից են «Հայ արվեստն Ուրարտուից մինչեւ մեր օրերը» ցուցահանդեսը փարիզյան Լուվրում, այդ աշխարհահռչակ թանգարանում հայկական խաչքար ցուցադրելու նպատակով բանակցությունները, ազգօգուտ այլ նախաձեռնություններ:

Հ. Լիլոյանի անժխտելի ծառայություններից են հայ մշակույթի մի շարք մեծերի փաստաթղթերի ու ստեղծագործությունների վերադարձը Հայաստանի թանգարաններ, Մատենադարան, արխիվներ: Ֆրանսահայերը նրան վստահում էին արժեքավոր փաստաթղթեր, արվեստի եզակի նմուշներ, որոնք Հ. Լիլոյանի ձեռամբ ապահով հասցվեցին մայր հայրենիք եւ հանգրվանեցին թանգարաններում:

1982-89 թթ. Հենրիկ Լիլոյանը ղեկավարել է Հայաստանի արտասահմանյան տուրիզմի գլխավոր վարչությունը («Ինտուրիստը») հայկական ԽՍՀ կառավարության անդամի կարգավիճակով: Այդ տարիներին ավարտին հասցվեց «Արմենիա» հյուրանոցի երկրորդ մասնաշենի շինարարությունը, վեր խոյացավ երաժշտական կոմեդիայի թատրոնի շենքը (հաշվի առնելով մշակութային հասատություններ կառուցելու արգելքը, թատրոնը կառուցվում էր «Ինտուրիստի» կոնֆերանս-դահլիճ անվանումով), արտասահմանյան տուրիզմը զգալիորեն ամրապնդեց իր դիրքերը իբրեւ հանրապետության ժողովրդական տնտեսության հզոր ճյուղ:

1989 թ., երբ «Ինտուրիստի» վարչությունները միութենական հանրապետություններում լուծարվեցին (դա արվեց նաեւ Հայաստանում), Հ. Լիլոյանը նշանակվեց Հանրային գրադարանի տնօրեն: Նրա նախաձեռնությամբ հասատությունը վերանվանվեց Ազգային գրադարան: Հետագայում Հ. Լիլոյանն աշխատանքի անցավ ՀՀ ԱԳՆ-ում, իբրեւ պատմադիվանագիտական բաժնի հիմնադիր-վարիչ՝ սանձնելով նաեւ ԱԳՆ «Դիվանագիտական բանբերի» խմբագրումն ու լույսընծայումը: Այդ ամենը, սակայն, երկար չտեւեց: Փորձառու դիվանագետին տեղափոխեցին այլ, աննշան գործի՝ սեղան տրամադրելով ԱԳՆ գրադարանի անհրապույր ու ցուրտ անկյունում: ՀՀՇ-ական իշխանությունը չցանկացավ օգտվել նրա հարուստ կենսափորձից ու գիտելիքներից, եւ առաջացած տարիքի պատրվակով Հ. Լիլոյանը դուրս նետվեց ԱԳՆ-ից:

Մի քանի տարի դիվանագիտության պատմություն է դասավանդել «Հրաչյա Աճառյան» համալսարանում:

Իր վարած բոլոր պատասխանատու քարտուղարներում Հ. Լիլոյանը մնացել է լրագրող, հրապարակախոս: 7 տարի շարունակ թղթակցել է **«Ազգին»**, գրել է տարաբնույթ նյութեր միջազգային դրությունից, մեկնաբանություններ, հուշագրություններ: Կյանքի հետաքրքրագույն պահերն ու հանդիպումները տեղ են գտել նրա հուշերում, նոթագրություններում, ճամփորդական պատմվածքներում: ԽՍՀՄ ԱԳՆ արխիվում նրան հաջողվել էր գտնել, իսկ հետագայում՝ հրապարակել մի շարք հետաքրքրական պատմական փաստաթղթեր՝ կազմված 1921 թ. մոսկովյան տխրահռչակ պայմանագրի հետ:

Հ. Լիլոյանի գրչին է պատկանում առաջին հայերեն հետազոտությունը խորհրդային դիվանագետ Լեւ Կարախանի (Լեւոն Կարախանյան) կյանքի ու գործունեության մասին: «Վերածնված Հայաստանի մշակույթը» գիրքը թարգմանվել է ուկրաիներեն եւ լույս տեսել Կիեւում: Նրա արագահաս հիվանդությունն ու մահը անավարտ թողեցին «Դիվանագիտական բառարանը»՝ առաջինը հայ իրականության մեջ:

Անցյալ տարի, կարծես սրբագրելով նախկին իշխանությունների սխալը, Հայաստանի արտգործնախարարի միջնորդությամբ Երեւանում տեղադրվեց Հ. Լիլոյանի հուշատախտակը: Հայ-ռուսական պետական համալսարանը պատրաստվում է հրատարակել նրա հոդվածների ժողովածուն:

Տիկնոջ ու համախոհի՝ կենսաֆիզիկոս Սեդա Դանիելյան-Լիլոյանի վաղաժամ մահը սրեց նրա հիվանդությունը եւ արագացրեց վախճանը...

Այսօր մեզ մնում է Հենրիկ Յոլակի Լիլոյանի լուսավոր կերպարը, բարի գործերն ու վառ հիշատակը: Ճանաչողները չեն մոռանում նրա առկայծող հումորը, անսահման բարությունն ու զուսպ հայրենասիրությունը:

«ԱԶԳ»

Տարածքում

Հայերը «հեսվարդյա» Վրաստանում

Վրաստանի խորհրդարանի ազգությամբ հայ պատգամավոր Վան Բայբուրթյանն ասում է, որ նախագահ Միխայիլ Սաակաշվիլու իշխանության գալով վերացվել է հակահայ մթնոլորտը, որ տիրում էր 2003 թ., հատկապես խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ընթացքում: Նա ասում է, որ հայության մեջ հույս է առաջացել վաղվա օրվա նկատմամբ:

Հարեւան հանրապետությունում, ըստ վերջին մարդահամարի տվյալների, հայության թիվը մոտ 250 հազար է կամ երկրի ամբողջ բնակչության 6 տոկոսը: Այս թվի մեջ չեն մտնում աբխազահայերը, որոնց թիվը մոտ 80 հազար է: Ընդհանուր առմամբ վիրահայությունը ողջունեց Վրաստանում տեղի ունեցած իշխանափոխությունը եւ 2004 թ. նախագահական ընտրություններում գերազանցապես քվեարկեց «վարդյա» առաջնորդ Միխայիլ Սաակաշվիլու օգտին:



Ի՞նչ է փոխվել անցնող 6 ամիսների ընթացքում Վրաստանում, ի՞նչ ակնկալիներ ունեն մեր հայրենակիցները: Նախ եւ առաջ պետք է նկատել, որ Վրաստանում այն ցնծությունը, որ ծնավորվել էր նոյեմբերյան հեղափոխությունից հետո, կամաց-կամաց իր տեղը զիջում է սթափ մտածողությանը: Ակնհայտորեն վրացական վարդերը թառամում են: Արդեն իսկ ժողովրդի մի հատվածը սկսել է դժգոհել Վրաստանի նոր իշխանություններից: Օրինակ, երբ Վրաստանի նախագահի նստավայրում տեղի էր ունենում Հայաստանի վարչապետի հանդիպումը Միխայիլ Սաակաշվիլու հետ, մոտ 100 մարդ ցույց էր կազմակերպել եւ «հրեա-մասոնական դրածոներ» Սաակաշվիլուց, Ժվանիայից եւ մյուսներից պահանջում էր բանտից ազատել իրենց կրոնական առաջնորդ Բասիլ Մկալավիշվիլուն, որը հայտնի է կրոնական փոքրամասնությունների հանդեպ իր ոտնձգություններով:

Մարինա Կիրակոսյան-Մոսեսովան բանաստեղծուհի է, գրում է ռուսերեն, բայց մտածողությամբ, ինչպես ինքն է ընդունում, հայ բանաստեղծ է: Նա բնակվում է հայտնի նավթարդյունահանող եւ մեծ բարեգործ Ավետիք Ղուկասյանի կառուցած տանը, դրանով շատ է հպարտանում, քանի որ ժամանակին այդ տանն է հյուրընկալվել Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը: Շեւարդնաձեի իշխանության տարիներին Մարինան 2 գիրք է հրատարակել, շուտով լույս կտեսնի 3-րդը:

«Ներկա պահին ես չեմ կարող ոչինչ ասել, թե ինչ է փոխվել հայության համար Սաակաշվիլու իշխանության գալով: Ընդամենը մի քանի ամիս է նա նախագահ, բայց մինչ այժմ զգալի փոփոխություններ չենք տեսնում: Բայց ես հուսով եմ, որ թիֆլիսահայերի վիճակը կբարելավվի», ասում է նա:

Սփյուռքի մեր գաղթօջախների մեջ վիրահայերն առանձնանում են մի շարք առումներով: Առաջին հերթին վիրահայերը շատ վատ են ապրում: Ամբողջ Վրաստանի տարածքում չկա որեւէ մեծահարուստ հայ, ինչն ինքնին տարօրինակ է, եթե հաշվի առնենք, որ հայերը դրսում փող աշխատելու, հարստանալու ունակություններ ունեն:

Վիրահայությունն, անշուշտ, հուսով է, որ Սաակաշվիլու իշխանության գալով իրենց կյանքը կփոխվի: Սակայն Յուրի Մկրտումյանցը, որն իր թեկնածությունն առաջադրեց 2004 թ. նախագահական ընտրություններում, ընտրություններից առաջ հանեց. կարծում է, որ հայությանը բոլորովին էլ վարդյա ապագա չի սպասում: Մկրտումյանցն ասում է, որ Սաակաշվիլին Աթաթուրքի կրկնօրինակն է Վրաստանում: Հակառակը՝ նա մտահոգություններ ունի, որ նոր իշխանությունների օրոք Վրաստանում ազգայնականությունը տեղի չի տա:

Մասնավորապես նա հիշեց երկու դեպք: Վերջերս «Ռուսթավի-2» հեռուստաընկերության ստեղծագործական խումբը ժամանել է Սանահին, նկարահանումներ կատարել եւ վրաց լսարանին հորդորել, թե ժամանակն է, որ հավատացյալները մեկնեն եւ աղոթեն նախկին վրացական սրբավայրերում: Վրաց ազգայնական որոշ շրջանակներ ոչ միայն Սանահինը, այլեւ Լոռին ամբողջությամբ, մինչեւ Սեւանի ափերը համարում են բուն վրացական տարածքներ:

Եթե «Ռուսթավի-2»-ն ամենամեծ լսարանն ունի հեռուստաընկերությունների մեջ, ապա «Կվիրիս պալիտրա» շաբաթաթերթն ունի ամենամեծ տպաքանակը վրացական մամուլում: Մայիսյան համարներից մեկում, ասում է Մկրտումյանցը, թերթը 2 էջի վրա տպագրեց պատմական Վրաստանի քարտեզը, որտեղ ներկա Հայաստանի տարածքը ոչ միայն ամբողջությամբ նշվում էր վրացական, այդ տարածքների վրա չէր նշված Հայաստան անունը:

Խնգյանոս Բազայանը Հավլաբարի հին բնակիչներից է: Նա ասում է, որ այսօրվա Վրաստանում իշխում են շովինիստներն ու ֆաշիստները: Ճիշտ է, գործում են գաղտնի, «վրաց ժողովրդին թունավորում մեր ազգի դեմ»: «Բանվոր մարդը գնում է աշխատանք խնդրելու, հարցնում են նրա ազգային պատկանելությունը եւ դեմ ու դեմ ասում, որ մենք հայերին չենք ընդունում», բողոքում է Բազայանը, բայց ավելացնում. «Մի փոքր հույս ունեմ, որովհետեւ Սաակաշվիլին ավելի իրատեսական է խոսում»: Նա ցավով պատմում է, որ հայերին Վրաստանում ավելորդ են համարում, մինչդեռ Թիֆլիսի համար հայությունը շատ բան է արել:

Խաչատուր Գետրգյանը հին Թիֆլիսի բնակիչներից է: Նրան ճանաչում են որպես մանկավարժի ու մանրակերտողի: «Ոչ մի բան չի փոխվել, Շեւարդնաձեի ժամանակ ինչ որ կար, նույնը շարունակվում է: Խոստանում էին, որ հեռուստատեսությամբ հայերի համար հաղորդումներ կհեռարձակվեն: Չի աշխատում նաեւ հայկական ռադիոն», ասում է Գետրգյանը:

Կյանքի 80-րդ տասնամյակ մտած այս մարդը հիշեց Նիկոլայ ցարի ժամանակները, երբ, իր խոսքերով, հայությունն իշխում էր Թիֆլիսում: «Հետզհետե հայությունն այստեղ մարում է եւ մարելու է: Շատ բան կարելի է ասել, բայց լեզուներս կարճ ենք պահում, քանի որ պարում ենք այստեղ, այս ավազ-հողի վրա», ասում է նա եւ ցավով նկատում, որ «հայոց պատմությունը ջնջվելու է Թիֆլիսից»:

Վրացական ռադիոյի հայկական հաղորդումների բաժնի վարիչ Սուսաննա Խաչատրյանը համոզված է, որ նոր իշխանությունների գալով վիրահայության շրջանում հույս է առաջացել: «Այսօր արդեն հույս կա, որ այս հողի վրա մենք կարող ենք հայ մնալ եւ ամենակարեւորը՝ պահպանել մեր մշակութային օջախները, կոթողները, հայկական ոգին», ասում է նա:

ԹԱԹՈՒԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

«Վորլդ Վիժնը» հայ հասարակությանը

«Վորլդ Վիժն» համաշխարհային կազմակերպության Հայաստանում իրագործվող բազմաբնույթ ծրագրերը, միտված ամուր եւ կայուն Հայաստանի կայացմանը, իրականացվում են խաղաղության եւ համերաշխության քրիստոնեական արժեքներին հավատարիմ աշխարհայացքային սկզբունքով: Այս մասին տեղեկանում ենք «Վորլդ Վիժն Հայաստան» ազգային գրասենյակի տնօրեն Դեյվիդ Թոմսոնի 2003 թ. տարեկան զեկույցի տպագիր տարբերակից, որում ներկայացված են կազմակերպության հայաստանյան գործունեության ընդհանուր ուղղությունները: Նկատի ունենալով Հայաստանի ազգաբնակչության համատարած աղքատության, եկամուտների անհավասարության, հասարակության խավերի բեւեռացման ակնհայտությունը՝ «Վորլդ Վիժն» իր առաքելություններից մեկն է համարում աջակցումն աղքատության նվազեցմանը՝ առաջադրելով տնտեսական զարգացման այնպիսի ծրագրեր, որոնք առավելագույնս աղքատ խավեր են ընդգրկում:

Հասարակության տարբեր մակարդակներում մեկ երեխայից մինչեւ մեկ ընտանիք, ապա եւ ամբողջ համայնքներում երկարաժամկետ փոփոխություններ մտցնելու կազմակերպության ծրագրերը կյանքի են կոչվել Գյումրիում, Սյունիքի եւ Տավուշի մարզերում:

Գյումրու տարածքային զարգացման (ԱՄՆ գրասենյակի կողմից ֆինանսավորվող) «Երեխաների աջակցություն» ծրագրում ընդգրկված շուրջ 3000 երեխաների համար կազմակերպված երաժշտության, անգլերենի, կրոնի, արհեստների դասընթացները նպաստել են այդ երեխաների ընդհանուր զարգացմանը: Ձեռուցման ծրագրերի մասնակցությունը հնարավորություն է տվել Մուշ-2 համայնքի 362 ընտանիքի ապահովել էլեկտրաէներգիայի կտրոններով, եւ Ավստրիական թաղամասի 110 ընտանիքի՝ բնակարանների ջեռուցմամբ:

Տավուշի մարզում տարածքային զարգացման ծրագիրը քաղաքացիական խմբերի հետ իրականացրել է մանկապարտեզների, դպրոցների բարեկարգում, ճանապարհների եւ ոռոգման համակարգերի վերակառուցում: Մարզում սաստիկ ջրհեղեղից տուժած 10.000 մարդկանց տրվել է օգնություն, միջոցներ են տրվել նաեւ ջրհեղեղի պատճառով վնասված ոռոգման եւ խմելու ջրի համակարգերը վերակառուցելու համար:

Սյունիքի քաղաքացիական նախաձեռնությունների ծրագրերն ուղղված են կարիքավորներին՝ տնտեսական եւ սոցիալական զարգացման ծրագրերում ներգրավվելուն: «Փոքր ձեռնարկությունների զարգացման հիմնադրամ» միկրոֆինանսական ծառայությունը հնարավորություն է տալիս օգտվելու նաեւ վարկային ծառայություններից: Երկարաժամկետ ծրագրերին զուգահեռ գործում են «Օգնության ծրագրերը», հագուստ, անձնական հիգիենայի պիտույքներ տրամադրելով բնակիչներին:

Կյանքի համընդհանուր վերափոխումը ենթադրում է բարելավումներ ինչպես սոցիալական, ֆինանսական, կրթամշակութային, այնպես էլ հոգեւոր ոլորտներում: Հայ առաքելական եկեղեցու եւ «Gospel Light Worldwide» կազմակերպության համագործակցությամբ «Վորլդ Վիժն Հայաստան» «Քրիստոսը երեխաներին» ծրագրի շրջանակներում տպագրել է շուրջ 11.000 քրիստոնեական կրթական դասագրքեր՝ առաքելով Հայաստանի դպրոցներ:

«Վորլդ Վիժնը» ներդրումներ ունենում է նաեւ առողջապահության ոլորտում: 2002 թ. «Բրիտանական ավիաուղիները» (BA), Բրիտանիայի դեսպանատունը, «Ցավ առանց սահմանի» (DSF) եւ «Վորլդ Վիժն Հայաստանը» նախաձեռնեցին «Երջանիկ ժպիտ» ծրագիրը, որի նպատակն էր «նպաստակի շրթունք եւ գայլի երախ» արատով տառապող երեխաների համար ստեղծել վերականգնողական վիրահատության հնարավորություն, ինչը հնարավոր դարձավ իրագործել բրիտանական դեսպանատան միջոցով կազմակերպված «Burns Supper» ամենամյա բարեգործական միջոցառման ժամանակ ներդրած գումարների հաշվին՝ ելնելով պատշաճական վիճակագրության այն տվյալներից, որ Հայաստանում ծնված յուրաքանչյուր վեցերորդ երեխան տառապում է այս արատով: 2003 թ. Գյումրու մանկական 5 երեխաներ վիրահատվել են Երեւանի բժշկական կենտրոնում:

Իր այս ծրագրերն իրագործելու համար «Վորլդ Վիժն Հայաստանը» համագործակցում է միջազգային եւ տեղական կազմակերպությունների, ՀՀ կառավարության, համայնքների, առանձին անհատների հետ եւ փորձում օգնել «Հայաստանում կառուցելու քաղաքացիական հասարակություն, որտեղ յուրաքանչյուր մարդ արժեքավորված է»:

ՄԵԼԻՆԱ ԲԱԳԱՅԱՆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Գիրք ոչ հաճելիի, բայց անհրաժեշտի մասին

Ըստ երկրաշարժերի կրկնելիության օրենքի, որն ի հայտ է եկել մարդկության պատմության հազարամյակների փորձով, ուժեղ երկրաշարժերը միեւնույն տարածքներում պարբերաբար կրկնվում են: Որքան շատ ժամանակ է անցնում նախորդ «սեյսմիկ իրադարձությունից», այնքան մենք ավելի ենք մոտենում հաջորդ ուժեղ երկրաշարժին: Մասնագետների հաստատած այս դաժան իրողությունը թեկուզ մեկ օր մոռանալը չափազանց թանկ կարող է նստել հատկապես ակտիվ սեյսմիկ գոտում բնակվող հասարակության վրա: 1926 թվականի Լենինականի երկրաշարժը մոտ 1000 կյանք խլեց, քաղաքում ու նրա շրջակայքում շատ տներ ու շինություններ ավերվեցին: Դրանից 62 տարի անց, 1988 թվականին նույն տարածաշրջանում տեղի ունեցած առավել ուժեղ երկրաշարժից զոհերի թիվն ու ավերածությունների ծավալները մի քանի տասնյակ անգամ ավելի էին: Երկրի առկա բնակչության համեմատ զոհերի տոկոսային հարաբերությամբ Սպիտակի երկրաշարժը համարվում է 20-րդ դարի ամենակործանարար սեյսմիկ աղետը ամբողջ աշխարհում: Իսկ կարո՞ղ էր այլ կերպ լինել: Իհարկե կարող էր:

1906 թվականին Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած ուժեղ երկրաշարժից հետո, որը գործնականում երկրի երեսից ջնջեց այդ քաղաքը, ԱՄՆ կառավարությունը ձեռնամուխ եղավ հաջորդ սեյսմիկ վտանգի հնարավոր հետեւանքների նվազեցման լայնամասշտաբ ծրագրի մշակմանն ու գործադրմանը: Եվ...82 տարի անց, 1989 թվականին տարածաշրջանում կրկնված ու իր ուժգնությամբ Սպիտակինը գերազանցող երկրաշարժից զոհվեց ընդամենը 62 մարդ...

Սեյսմիկ ռիսկի նվազեցումը, սեյսմիկ պատշաճությունը, որը որպես պետական քաղաքականություն եւ այն մշակող ու գործի դնող պետական կառավարման համակարգ (ի դեմս ՍՊԱԾ-ի) մեզանում սկսեց ձեւավորվել 1991 թվականից, երկարաժամկետ, մշտական ու ամենօրյա խնդիր է: Որտեղ գլխավորը մինչ հերթական երկրաշարժը կատարվող քայլերն են: Սեյսմիկ ռիսկի նվազեցման կարեւորագույն տարրերից մեկը հասարակության, նրա յուրաքանչյուր անդամի եւ իշխանության բոլոր մակարդակների պատասխանատուների իրազեկությունն է: Այս հրամայականին լավագույնս ծառայող խիստ արժեքավոր դասագիրք է Սերգեյ Բալասանյանի, Սերգեյ Նազարեթյանի եւ Վարդան Ամիրբեկյանի «Սեյսմիկ պատշաճությունը եւ նրա կազմակերպումը» ուսումնական ձեռնարկը, որը հայերեն լույս է տեսել 2002 թվականին եւ մեծ արձագանք է գտել՝ ներկայացվելով միջազգային մասնագիտական շրջանակներում: Շատ մասնագետների հավաստմամբ դասագիրքը միջազգային պրակտիկայում նմանը չունի: Ուստի անհրաժեշտ է համարվել թարգմանել ռուսերեն եւ անգլերեն: Եվ ահա Գյումրու «Էլդորադո» հրատարակչությունը նորերս լույս է ընծայել այդ ձեռնարկի ռուսերեն, նախորդի համեմատ էականորեն վերամշակված ու լրացված տարբերակը: Վերջինս հունիսի 15-ին արդեն ներկայացվել է Թբիլիսիում, իսկ հունիսի 24-ին՝ ԱՄՆ-ի Բարլինգտոն քաղաքում, սեյսմաբանների գիտաժողովի ժամանակ:

Ուսումնական ձեռնարկը համալիր կերպով ներկայացնում է ինչպես սեյսմաբանության, այնպես էլ հատկապես սեյսմիկ պատշաճության հիմնական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Գրքի երկրորդ մասը, որը նվիրված է սեյսմիկ ռիսկի նվազեցմանը, հարուստ է համաշխարհային պրակտիկայից քաղված օրինակներով, հատկապես հաշվի են առնված Սպիտակի երկրաշարժի դասերը: Բերված հարուստ ու բազմակողմանի փաստերը, մասնավորապես սեյսմիկ ռիսկի նվազեցման բոլոր բաղադրիչների վերաբերյալ, սեյսմատեսչական աշխատանքների կազմակերպման արժեքավոր ուղեցույց է:

Սա որքան էլ ոչ հաճելիի մասին, սակայն նաեւ մեծ հետաքրքրությամբ ընթերցվող, էլ չենք ասում ուսանելի ու անհրաժեշտ գիրք է, որը կարծում ենք՝ պետք է մատվի բոլորիս սեղանին: Հանրապետական ու տեղական պատկան մարմինների եւ ծառայությունների ղեկավարների սեղանին՝ առավել եւս:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Արտերկիր

Թուրքիայի քաղաքական կյանքում թուլանում է բանակի դերը

Այդ մասին է վկայում Ազգային անվտանգության խորհրդի կազմի վերանայումը

Թուրքիայի քաղաքական կյանքում անվիճելի էր բանակի դերը: Նա ինքնակամ սանձնելով աշխարհիկ եւ հանրապետական կարգերի երաշխավորի դերը երկրում, միաժամանակ վերահսկում էր օրենսդիր եւ գործադիր իշխանությունների գործունեությունը: Վերահսկողության միջոց էր դարձել Ազգային անվտանգության խորհուրդը, որտեղ զինվորական իշխանությունների ներկայացուցիչները թվով գերակշռում էին քաղաքացիական իշխանությունների ներկայացուցիչներից:

Այլ կերպ՝ երկրի նախագահի գլխավորած խորհրդի կազմում վարչապետի, փոխվարչապետի, արտաքին եւ ներքին գործերի նախարարների դիմաց ընդգրկված էին թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի պետը, ցամաքային զորքերի, ռազմածովային եւ ռազմաօդային ուժերի, ինչպես նաեւ ժանդարմերիայի գլխավոր հրամանատարները: Ընդ որում, գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալը կատարում էր Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարի պարտականությունը:

Ակնհայտ է, որ տվյալ խորհրդում զինվորականների գերակայության պայմաններում նրա այսպես կոչված խորհրդատվական բնույթի առաջարկները Թուրքիայի ազգային մեծ ժողովի եւ թուրքական կառավարության համար հրահանգի բնույթ էին ստանում: Երկրի համար թեեւ Թուրքիայում միանձնյա իշխանության եկած «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության դիրքորոշումը վերոհիշյալ ազգային խնդիրներում փաստացի մնաց անփոփոխ, այդ խնդիրների լուծման նրա պատրաստակամությունն ու դրան Եվրոմիության արձագանքն անհրաժեշտ դարձրեց երկրի քաղաքական կյանքում Ազգային անվտանգության խորհրդի դերի նվազեցումը: Սրվեցին վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կառավարության եւ զինված ուժերի գլխավոր շտաբի տարաձայնությունները: Դրան նոր թափ հաղորդեց ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բանակցությունների կազմը: Վերանայման շրջանակում նախ՝ խորհուրդն ընդլայնվեց հօգուտ քաղաքացիական իշխանությունների, նրա կազմում ընդգրկվեցին եւ երկու նախարարներ, ապա խորհրդի գլխավոր քարտուղարի պաշտոնը գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալի փոխարեն հանձնարարվեց դիվանագետի:

Խոսքը տվյալ դեպքում Հունաստանում Թուրքիայի դեսպան Մեհմեդ Յիղիթ Ալփոգանին է վերաբերում: Օգոստոսի 19-ի համարում տեղեկացնելով այդ մասին, «Վաքիթ» թերթը նշում է, որ Ալփոգանի նշանակումը հաստատել է նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը: Այսպիսով, նա լինելով քաղաքացիական իշխանությունների ներկայացուցիչ, դարձավ Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարը:

Հօգուտ քաղաքացիական իշխանությունների Ազգային անվտանգության խորհրդի ընդլայնումը ենթադրում է նրա կազմում զինվորական իշխանությունների դիրքերի թուլացում: Քանի որ բանակը երկրում օրենսդիր եւ գործադիր իշխանությունների գործունեությունը վերահսկում է խորհրդի միջոցով, ուստի նրա կազմում զինվորականության դիրքերի թուլացումն ինքնաբերաբար կհանգեցնի վերահսկողության թուլացմանը: Դա միաժամանակ կընդլայնի բանակից անկախ գործելու էրդողանի կառավարության հնարավորությունը: Ազգային խնդիրներում նախաձեռնությունը ինքնաբերաբար կանցնի գործադիր իշխանություններին: Այսպիսով, վերջիններս այդ խնդիրների կարգավորման առնչությամբ պատասխանատվություն հայտնելու դեպքում այլեւս չեն կարող թաքնվել բանակի թիկունքում:

ՀԱՅՈՐ ՉԱՔԱԲՅԱՆ

կենսական բոլոր խնդիրները նախապես խորհուրդն էր քննարկում, նա էլ լուծումներ էր առաջադրում այնպիսի խնդիրներին, ինչպիսիք են Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցությունը, կիպրական հիմնահարցը, իրական հարցը, ներառյալ Հայաստանի հետ հարաբերությունները ու դարաբաղյան հակամարտությունը:

Թեեւ Թուրքիայում միանձնյա իշխանության եկած «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության դիրքորոշումը վերոհիշյալ ազգային խնդիրներում փաստացի մնաց անփոփոխ, այդ խնդիրների լուծման նրա պատրաստակամությունն ու դրան Եվրոմիության արձագանքն անհրաժեշտ դարձրեց երկրի քաղաքական կյանքում Ազգային անվտանգության խորհրդի դերի նվազեցումը: Սրվեցին վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կառավարության եւ զինված ուժերի գլխավոր շտաբի տարաձայնությունները: Դրան նոր թափ հաղորդեց ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բանակցությունների

Ադրբեջանը պատրաստվում է ընդունել ամերիկյան զորաբաժին

Առաջիկա աշնանն Ադրբեջանում ամերիկյան զորք է տեղաբաշխվելու: Այդ մասին տեղեկացնում է մոսկովյան «Նեզավիսիմայա գազետա» օգոստոսի 18-ի համարում: Թերթի տվյալներով, Ադրբեջանում ամերիկյան զորքերի տեղաբաշխման շուրջը սկզբունքային համաձայնություն է ձեռք բերվել ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի Բաքու կատարած վերջին այցելության ժամանակ: Մինչ այդ զգալի նախապատրաստական աշխատանք էր կատարել Եվրոպայում ամերիկյան զորքերի հրամանատարի տեղակալ Չարլզ Ուտլդը, որը տարեսկզբին երկու անգամ այցելել էր Բաքու:

Օրերս Ուտլդը հայտարարել էր, թե «Այժմ Վրաստանը, Հայաստանը եւ Ադրբեջանը աշխարհաքաղաքական նոր կարեւորություն են ստանում Կասպից ծովի ածխաջրածնային պաշարների, ահաբեկչության սպառնալիքի, զենքի ու թմրադեղերի անօրինական առեւտրի պատճառով»: Գեներալ Ուտլդի խոսքերով, այդ երկրներում «Վաշինգտոնը մտադիր չէ ստեղծել մշտական ռազմական» եւ Ադրբեջանում ամերիկացի զինծառայողներն իբր միայն պարեկություն են անելու եւ աղահովելու են Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի անվտանգությունը:

Թե՛ Բաքվում եւ թե՛ Վաշինգտոնում պաշտոնյաները նախընտրում են չխոսել ամերիկյան նոր ռազմակայանի ստեղծման մասին, ասելով, թե Ադրբեջանում «ժամանակավորապես տեղաբաշխվում են շարժունակ ուժեր»: Սակայն ադրբեջանցի զինվորական փորձագետ Ջասուր Մամեդովը «Նեզավիսիմայա գազետային» հայտնել է, որ ամերիկացի մասնագետները մանրակրկիտ զննել են Ջյուդամիր քաղաքի, Նասոսնի եւ Գալա ավանների օդանավակայանները:

Ավելին, Մամեդովի խոսքերով, «Ջյուդամիրի ռազմակայանն արդեն լիովին պատրաստ է ընդունել ամերիկացի զինվորների: Այնտեղ վերջերս ավարտվել են թռիչքուղու վերակառուցումը եւ ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանող ռազմավանի արդիականացումը»:

Իրանը պնդում է, թե մեկ տարուց միջուկային ռումբ կունենա

Եվրոմիության երկրների հետ ներկայումս վարվող բանակցությունների ժամանակ Իրանի ներկայացուցիչը հայտարարել է, թե իր երկիրն ի վիճակի է կուտակել հարստացված ուրանի այնպիսի քանակություն, որը թույլ կտա արդեն մեկ տարի հետո միջուկային ռումբ արտադրել:

Այս կապակցությամբ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ջոն Բոլտոնը Ռոյթեր գործակալության թղթակցին ասել է, թե տվյալ հայտարարությամբ Իրանը փորձում է բանակցություններում ճնշում գործադրել ԵՄ երկրների վրա, որպեսզի նրանք հրաժարվեն իրանցիներից պահանջում են մեղմացնել դիրքորոշումը միջուկային ծրագրի հարցում:

Բոլտոնը Ատոմային էներգիայի միջազգային գործակալությանը կոչ է արել Իրանի միջուկային ծրագրի հարցը հանձնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, որը պետք է միջազգային պատժամիջոցներ սահմանի իրանցիների նկատմամբ:

Ամերիկյան հետախուզության տվյալների համաձայն, Իրանը կարող է միջուկային ռումբ ստեղծել 3-5 տարի հետո միայն: Սակայն Բուշեհրում ներկայումս կառուցվող ռեակտորն իրանցիներին թույլ կտա հեռագայում տարեկան արտադրել 30 ռումբ: Ամերիկացիները պնդում են, թե Իրանն զբաղվում է հարստացված ուրանի եւ ռազմական պլուտոնիումի մշակմամբ:

Քերին դեմ է արտերկրից ամերիկյան զորքերի դուրսբերմանը

Դեմոկրատական կուսակցությունից ԱՄՆ նախագահության թեկնածու Ջոն Քերին խստիվ քննադատել է արտասահմանում գտնվող ամերիկյան զորքերը վերաբաշխելու նախագահ Ջորջ Բուշի մտադրությունը: Ընտրողների հետ հանդիպման ժամանակ Քերին հայտարարել է, թե արտասահմանյան մի շարք երկրներում ամերիկացի զինծառայողների թիվը կրճատելու որոշումը «անպատեհ ժամանակ ընդունված սխալ որոշում է»:

Քերիի կարծիքով, Եվրոպայում եւ Ասիայում ամերիկյան զորքերի թվակազմի կրճատումը սպառնում է ԱՄՆ-ի ազգային անվտանգությանը: Մասնավորապես Հարավային Կորեայից ամերիկացի հազարավոր զինվորների դուրսբերումը կուժեղացնի միջուկային զենքի մշակմամբ զբաղվող ԿԺԴՀ-ի դիրքերը:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը մեջբերում է Քերիի այն խոսքերը, թե հիմա ամերիկյան զորքերը դուրս բերելու ժամանակը չէ: «Ինչո՞ւ 12 հազար զինծառայող դուրս բերենք Կորեական թերակղզուց այժմ, երբ բանակցում ենք միջուկային զենքի մշակմամբ զբաղվող ԿԺԴՀ-ի հետ», հարց է տալիս Քերին:

Երկուշաբթի օրը նախագահ Բուշը հայտարարել էր, որ ամբողջ աշխարհում ամերիկյան զորքերը վերաբաշխվում են «առավել շարժունակ եւ ճկուն զինված ուժեր ստեղծելու նպատակով»: Բուշի ծրագրի համաձայն, արտերկրում տեղաբաշխված 60-70 հազար ամերիկացի զինծառայողներ առաջիկա 10 տարում պետք է վերադառնան հայրենիք:

Տարերքը Եվրոպայում ավերներ է գործում

Փոթորիկը եւ հորդառատ անձրեւները վերջին երկու օրերին զգալի վնասներ են պատճառել եվրոպական մի շարք երկրների: Ֆրանսիրեսը հաղորդում է, որ ամենից շատ տուժել են Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան: Երեքշաբթի օրը Ֆրանսիայում եղանակը կտրուկ վատացավ: Քամու արագությունը հասավ ժամում 80 կիլոմետրի: Հորդառատ անձրեւների եւ ուժգին ալեկոծության հետեւանքով երկրի միջերկրածովյան ափի մոտ խեղդվեց 9 մարդ:

Փարիզում լողափերը եւ հանրային զբոսայգիները փակ են: Սպասվում է փոթորիկ: Օդերեւութաբանները կանխատեսում են, որ քամու արագությունը կարող է հասնել ժամում 100 կիլոմետրի:

Մեծ Բրիտանիայի հարավում հեղեղը ոչնչացրել է մի ամբողջ գյուղ, հսկայական սողանքներ են առաջացել երկրի տարբեր շրջաններում: Էդինբուրգից 100 կմ հեռավորության վրա՝ Շոտլանդիայում սողանքի տակ են մնացել 39 ավտոմեքենաներում գտնվող 50 անձինք: Վատ եղանակ է հաստատվել Եվրոպայի մեծ մասում: Շվեյցարիայում փոթորիկը պոկել է տների տանիքները, արմատախիլ արել ծառեր, տապալել էլեկտրասյուներ: Դանիայում կայծակը խփել է մի մեծ ծառի, որի տակ 31 կով էր պատսպարված: Բոլոր կովերը սատկել են:

Առայժմ տարերքից զերծ են մնում միայն Իտալիան, Իսպանիան եւ Հունաստանը:

Պ. Ռ.

Նավթի գների նոր ռեկորդ Նյու Յորքում

Մեկ բարել նավթի գինն առաջին անգամ գերազանցել է 47 դոլարի սահմանագիծը: Ֆրանսիրեսը հաղորդում է, որ Նյու Յորքի բորսայում չորեքշաբթի երեկոյան արձանագրված նոր ռեկորդային գինը լրջորեն մտահոգում է նավթ սպառող երկրներին, որոնք վախենում են նավթի հնարավոր անբավարարության հեռանկարից: Այդ օրն արձանագրված ամենաբարձր գինը եղել է մեկ բարել անմշակ նավթի դիմաց 47,39 դոլար: Լոնդոնի բորսայում նույն նավթը վաճառվել է 43,03 դոլարով:

Հեղուկ վառելիքի ներկայիս թանկացումը բացատրվում է ոչ միայն Իրաքի անկայուն վիճակով, այլեւ ԱՄՆ-ում նավթի ռազմավարական պաշարների կրճատմամբ: Երկրի էներգետիկ վարչության զեկուցագրի համաձայն, օգոստոսի 13-ին ավարտված շաբաթվա ընթացքում նավթի պաշարները նվազել են 1,3 մլն բարելով: Նախորդ երկու շաբաթներին եւս պաշարները կրճատվել էին:

Ամերիկացի վերլուծաբան Մարշալ Սթիվզը նշում է, որ թեեւ գարնանը նավթի պաշարներն այժմվանից պակաս են եղել, բայց ներդնողները մտահոգ են, որ պահանջարկը կարող է գերազանցել առաջարկին: Ճիշտ է, իրավիճակ կա մահմեդականների առաջնորդ Մոքթադա ասա Սադրը խոստացել է իր մարդիկներին դուրս բերել սրբազան քաղաք Նաջաֆից, բայց մարդիկները սպառնացել են նավթամուղներ պայթեցնել Իրաքի հարավում: Ստեղծված անկայուն պայմաններում Իրաքի հարավից նավթի արտահանման ծավալները կիսով չափ կրճատվել են:

Մշակույթ

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնը մեկնարկեց

Հայրենաբնակ եւ սփյուռքահայ յուրաքանչյուր սերունդ պետք է իր համար նորովի բացահայտի իր արմատների, ազգային ինքնության ու մեկ միասնական մշակույթի խորությունն ու հարստությունը, հայ մշակույթը միավորող դերի պահպանման կարեւորությունը: Ահա սա է հիմք հանդիսացել ՀՀ մշակույթի նախարարության, «Հայաստան» համահայկական հիմնադրամի, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի եւ ՀՀ նախագահի հովանու ներքո կազմակերպված առաջին համահայկական մշակութային «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնը, որը սկսվեց օգոստոսի 14-ին եւ կընդունակվի մինչեւ օգոստոսի 24-ը:

Փառատոնի բոլոր մասնակիցներին իր ողջույնն է հղել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը՝ նշելով, որ «փառատոնը կոչված է դառնալու աշխարհասփյուռ հայության հոգեւոր համախմբման մի նոր ազդակ»: Մայր աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական սիրով ողջունել եւ օրհնությունն էր հղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը՝ նշելով, որ «փառատոնը կոչված է հայ հոգու կենդանության դրսեւորումը լինելու, մեր պատմությունը հիշող, մեր ներկայով ու միացյալ լուսավոր գալիքով ապրող հավասավոր հոգու դրսեւորումը: Մենք հավատում ենք, որ փառատոնն իր նպատակը կբերի մեր մշակութային կյանքի զորացմանը եւ կբացահայտի նաեւ մեր ժողովրդի շնորհալի ու տաղանդավոր շատ զավակների»: ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Հովիկ Հովեյանն իր ողջույնի խոսքում նշեց, որ «փառատոնը մի գեղեցիկ կամարի տակ է հավաքում հայ խմբերգն ու ասմունքը, հայ թատրոնն ու պարը, հայ երգն ու պատկերահանդեսը, որ ծեռակերտվում են աշխարհի տարբեր երկրներում, բայց հավերժորեն մնում են մաքուր, հայկաբարբառ»:

Փառատոնին մասնակցում են 22 երկրներից ժամանած 30 կոլեկտիվներ՝ թվով 1500 հայեր: Փառատոնի ծրագրում ընդգրկված են մշակույթի բոլոր բնագավառները եւ հանրապետության ողջ տարածքում տասը օրերի ընթացքում ջերմ մթնոլորտ է թեւածում՝ համախմբելով մշակույթի բոլոր նվիրյալներին:

«Ազգի» ընթերցողներին փորձեմ ներկայացնել փառատոնի անցած օրերի մասին մասնակի, իսկ հաջորդիվ մանրամասն, քանի որ նոր ենք վերադարձել արձակուրդից: Օգոստոսի 15-ի առավոտյան փառատոնի մասնակիցները Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում ներկա գտնվեցին Սուրբ Մարիամ Աստվածածնի եւ Խաղողօրհնեքի կրոնական ծիսակատարությանը, սացան Վեհափառ հայրապետի օրհնանքն ու բարեմաղթանքները: Իսկ երեկոյան Ալ. Սպենդիարյանի անվան օպերային եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայացավ փառատոնի հանդիսավոր բացումը, որին հատուկ շերթով Թատերական հրապարակից դահլիճ մտան մասնակից երկրներից ժամանած պատվիրակները (ցավալի էր, որ նրանցից շատերի համար դահլիճում տեղ չգտնվեց): Փառատոնը բացելու պատիվը տվեց ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանին, որն էլ ողջունելով ու կարեւորելով ձեռնարկը, նշեց, որ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնը պատմական նշանակություն ունի: Աշխարհի տարբեր ծայրերից համախմբվել են հայերը եւ այս փառատոնի միջոցով ներկայացնում են մեր դարավոր մշակույթն ու այն դառնալու է յուրաքանչյուր մի տոնահանդես...»: Այնուհետեւ հնչեց ՀՀ օրհներգը եւ բացվեց փառատոնի վարագույրն ու բեմում իրար հաջորդեցին հանրապետության ճանաչված ու նշանավոր անհատներ, պարային կոլեկտիվներ, բեմադրված բալետային կատարումներ: Ընդհանուր առմամբ համերգը հաջողված էր՝ չհաշված մի քանի թույլ եւ ավելորդ համարները: Իհարկե, հանդիսության շարունակությունը տեղափոխվեց անմիջապես Թատերական հրապարակ, որտեղ էլ ելույթ ունեցան բազմաթիվ համույթներ, պարային կոլեկտիվներ եւ անհատ երգիչներ:

Մինչեւ ուշ գիշեր իսկական տոն էր, ցնծություն ու զվարճանք, որ վայելեցին ներկաները ու կամաց-կամաց ցրվեցին շեղ ու յուրօրինակ հրավառությունից հետո: Շատերը կցանկանային դեռ երկար մնալ, զբոսնել ու նոր ծանոթություններ հաստատել, սակայն մտահոգված էին, որ այս անգամ էլ քաղաքաշինարանը չի հոգացել հասարակական տրանսպորտի ժամերը երկարացնելու մասին: Ինչեւէ, ով ինչպես կարողացավ տուն հասավ:

Փառատոնի յուրաքանչյուր օր կրում է իր խորագիրը եւ օգոստոսի 16-ը «Իմ Հայաստանին» էր նվիրված: Վաղ առավոտյան մասնակիցները, մշակույթի նախարար Հովիկ Հովեյանի, փոխնախարար Կարինե Խոդիկյանի, Ցեղասպանության թանգարանի տնօրեն Լավրենտի Բարսեղյանի գլխավորությամբ, փառատոնի խորհրդանիշը ներկայացնող Նարեի եւ Նարեկի ուղեկցությամբ ծաղկեպսակներով ու ծաղիկներով այցելեցին Ծիծեռնակաբերդի բարձունք եւ մեկ ոտք լռությամբ անմար կրակի մոտ հարգեցին Մեծ եղեռնի զոհերի հիշատակը, այցելեցին թանգարան հուշահամալիր եւ հավերժության պուրակում տնկեցին մեկ մշտադալար եղեւնի՝ փառատոնի մասնակիցների անունից:

Օրը հագեցած էր մարզեր այցելությամբ: 8-10 կոլեկտիվ այդ օրը եղավ Տավուշի, Գեղարքունիքի եւ Կոտայքի մարզերում: Տավուշի մարզի Դիլիջանի մշակույթի պալատի մոտ հյուրերին սպասելուց հոգնած, առանց նրանց սկսել էին բացօթյա համերգը տեղի մշակութային խմբերը եւ տեղավորվել դահլիճում: Իսկ այդ ժամանակ ավտոբուսների շարասյունը մեկ ժամից ավելի Սեւանի մայրուղու վրա կանգնել եւ սպասում էր մի քանի մասնակիցների, որոնց կազմակերպիչները, չգիտես ինչու, ժամերը ճիշտ չէին տեղեկացրել: Պատկերացրեք, մայրուղու վրա 300-400 մարդ մեկ ժամից ավելի արեւի տակ սիրված էր աջ ու ձախ քայլել, հայտարարված: Արարատյան թեմի Սբ. Սարգիս եկեղեցում ներկաներն ունկնդրեցին հոգեւոր երաժշտություն, իսկ օպերայի ազգային ակադեմիական թատրոնի բեմահարթակը տրամադրվել էր լավագույն երգի «Սայաթ-Նովա» համահայկական մրցանակաբաշխության մրցանակակիրներին, որոնք մեկ անգամ եւս իրենց ելույթներով հավատացրին, որ արժանի էին լավագույնի կոչմանը: «Առնո Բաբաջանյան» համերգասրահում էլ ընթանում էր դասական երաժշտության երեկո: Օրը հագեցած էր նաեւ մշակութային այլ միջոցառումներով: Գրեթե միաժամանակ Ազգային պատկերասրահի դահլիճներում բացվեց սփյուռքահայ նկարիչների ցուցահանդեսը, որին մասնակցում էին Հալեպից Ուրսո Համբարձումյանը, Զավեն Պարսամյանը, Վարդես Պարսամյանը, Վիգեն Շարոյանը, ծաղրանկարիչ Վրեժ Քասունին, Ջորջ Ամբարջյանը, Բեյրութից Ռոզին Վարդտի Սիսեռյանը եւ գյումրեցի Հրազդան Թոմմաջյանը: Հարեւան սրահում իրենց պատվավոր տեղն էին գտել հայ մանրաքանդակի դպրոցի հիմնադիր Բենիկ Պետրոսյանի 150 հրաբալի աշխատանքները եւ այդ ցուցադրությունը նվիրված էր քանդակագործի ծննդյան 65-ամյակին:

Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարանում միաժամանակ կայացավ «Նախագիծ եւ իրականացում» արտերկրի հայ ճարտարապետների ստեղծագործությունների եւ Արա Գյուլերիի լուսանկարչական աշխատանքների ցուցահանդեսների բացումը: Իսկ ՀՀ ժողովրդական արվեստի թանգարանում ներկայացվել էին Իրանի (Նոր Ջուղայի հայ կանանց գրության միության) «Հայկական ձեռագործ» աշխատանքները: Ցուցահանդեսի բացման ընթացքում կայացավ նաեւ «Հայկական տարազներ» գրքի շնորհանդեսը: Թատրոնի սիրահարներին միաժամանակ ներկայացվեց Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի շենքում Վրաստանի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի Հ. Պարոնյանի «Կսմիթներ» բեմականացումը, Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում «Մոնո ներկայացում» Մարի Ռոզ Աբուաֆյանի կատարմամբ (ԱՄՆ) եւ Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում Լիբանանի ՀԲԸՄ-ՀԵԸ-ի «Վահրամ Փափազյան» թատերախումբը ներկայացրեց Ջոն Պարդիկի «Խաղաղ մենաստան («Տարօրինակ միսիս Սեփջ») բեմադրությունները:

Օգոստոսի 18-ը «Հայ գրի եւ գրականության օր» էր հայտարարված եւ փառատոնի մասնակիցները վաղ առավոտյան այցելեցին Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարան»: Շաղ Ազնավուրի հրապարակում էլ կազմակերպվել էր հայ գրի բացօթյա ցուցահանդեսվաճառք, որտեղ ներկայացված էին Հայաստանում եւ սփյուռքում հրատարակված 50 հրատարակչությունների 1000-ից ավելի գրքեր: Երեկոյան Մհեր Մկրտչյան արտիստական թատրոնում Հայաստանի եւ սփյուռքի գրողների, ասմունքողների եւ արվեստագետների մասնակցությամբ կայացավ հայ պոեզիայի երեկո, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը՝ «Գողթան ճար» գրական-երաժշտական ծրագիրը՝ Վահրամ Թաքիկյանի, Սալբի Տարագչյանի եւ Հասմիկ Հացագործյանի մասնակցությամբ, «Արամ Խաչատրյան» համերգասրահում՝ հայ-արգենտինյան երաժշտության երեկո «Կադանս» կվինտետի կատարմամբ: Ուշ երեկոյան Թատերական հրապարակը կրկին լեփ-լեցուն էր: Տոնում էին «Արձագանք» ռադիոկայանի ստեղծման 7 տարին: Իհարկե, Երեւանի թատրասերները կրկին հնարավորություն ունեցան երեք թատրոններում դիտելու Լիբանանի Համազգայինի «Գասպար Իփեկյան» թատերախմբի Գ. Սունդուկյանի «Օսկար Պետրովիչն էն կինը» ուն», ԱՄՆ-ի «Ֆ. Մկրտչյան» թատրոնի Կ. Խոդիկյանի «Չկրակեք, ես արդեն սպանված եմ» եւ Վրաստանի Պ. Ադամյանի անվան դրամատիկական թատրոնի Գ. Խանջյանի՝ «Ավերակների պահակը» բեմադրությունները:

Օգոստոսի 19-ը թատրոնի օր էր հայտարարված, եւ Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում կայացավ «Նոան հատիկ-2004» մանկապատանեական թատերական փառատոնի հանդիսությունը, իսկ Հ. Պարոնյանի թատրոնի 60-ամյակով էլ սկսվեց թատերական հանդիսությունը: Օպերայի դահլիճում տոնական համերգը կեզրափակի «Թատրոնի օրը»:

Նշեմ, որ բոլոր միջոցառումներին ներկա էր ՀՀ մշակույթի նախարար Հովիկ Հովեյանը եւ պատշաճաւոր այլ անձինք, փառատոնի խորհրդանշական հագուստներով երիտասարդները: Վերջիններս այդքան էլ չեն կարեւորում իրենց կրած հագուստը եւ հատուկ հարգանք ու վերաբերմունք չեն ցուցաբերում իրենց հանձնարարված շատ կարեւոր ու պատասխանատու գործին:

Փառատոնը կարծես թե կայանում է՝ չհաշված բազմաթիվ թերությունները, որոնք նվազելու փոխարեն օրեցօր շատանում են:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Արա Գյուլերի լուսանկարները կմնան Հայաստանում

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական մշակութային առաջին փառատոնի օրերին ՀՀ ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի ցուցասրահը տրամադրվել էր ժամանակակից արվեստի խոշորագույն դեմքերից մեկի՝ պոլսահայ լուսանկարիչ Արա Գյուլերի (Տերտերյան) աշխատանքների ցուցադրությանը: Ցուցահանդեսի բացման առիթով ջերմ ու երախտագիտական խոսքեր ասվեցին լուսանկարչի հասցեին, որը սիրահոժար տրամադրել էր իր 60 աշխատանքները, որոնք պատկերում են վերջին 15-20 տարիների ընթացքում աշխարհի տարբեր անկյուններում ժամանակին պահ տված բազմազան սյուժեային լուսանկարներ, բնանկարներ, դիմանկարներ եւ, իհարկե, «Հայաստան», «Թուրքիա» շարքերը: Լուսանկարիչը չէր կարողացել գալ իր առաջին ցուցահանդեսի բացմանը մայր հայրենիքում, սակայն նա խոստացել է այդ ողջ հավաքածուն նվիրել Հայաստանին, եթե իր անվան թանգարան բացվի:

Ցուցահանդեսում ներկայացված լուսանկարները, գրականությունը, հոդվածները եւ մյուս բոլոր նյութերն այստեղ համարվում են Արա Գյուլերի երեւանյան հավաքածու: Լուսանկարչի անվան թանգարանով Հայաստանում կնավալվեն լուսանկարչական արվեստի լավագույն ավանդույթները եւ այն կդառնա արտերկրի հայ լուսանկարիչների հավաքատեղին, թանգարան-արխիվ, ուր մեկտեղ կհավաքվեն Հայաստանի եւ աշխարհի բնությունը, պատմությունը, աշխարհի պետությունների եւ ժողովուրդների անցուդարձերը ներկայացնող հազարավոր արժեքավոր նյութեր:

Արա Գյուլերը (Տերտերյան) արդի հաշաշխարհային լուսանկարչական արվեստի նշանավոր ներկայացուցիչներից մեկն է: Նա ծնվել է 1928 թ. Սամբուլում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի հայկական Մխիթարյան կրթարանում, այնուհետեւ ընդունվել է լիցեյ ու միաժամանակ հաճախել Մոտիսին էթոտքոլի թատերական դասընթացները, որտեղից էլ ձեռք բերած գիտելիքները եւ հմտությունը օգնել են հետագայում ինը թատերախաղեր գրելուն: 1950 թ. Արա Գյուլերի անունն առաջին անգամ երեւում է թուրքական մամուլում, որպես տաղանդավոր ու բանիմաց լուսանկարիչ: Նա նաեւ այդ տարիներին թղթակցել է արտասահմանյան մի շարք ամսագրերի եւ թերթերի («Time», «Stern», «Paris Match», «Sunday Times»: 1960 թ. աշխարհում առաջին անգամ Արա Գյուլերը լուսանկարում է «Նոյյան տարանը», իսկ 1961-ին անգլիական «Լուսանկարչական տարեգրքի» ամենամյա ամսագիրը նրան շնորհում է աշխարհի լավագույն յոթ լուսանկարիչներից մեկի տիտղոսը եւ ընտրում է միակ անդամը Թուրքիայից: 1962 թ. Արա Գյուլերը պարգեւատրվում է գերմանական «Master Leica» պատվավոր տիտղոսով, իսկ ամերիկյան «Gamera» պարբերականը թողարկում է նրա աշխատանքներին նվիրված հատուկ համար: Լուսանկարչի խցիկի տեսադաշտում են հայտնվել «Aphrodisias» հնավայրը, Նեմրութ լեռան, այսօր արդեն շատ նշանավոր հայկական թագավորական պանթեոնի արձանները եւ շատ հայ արվեստագետների լուսանկարներ: Արա Գյուլերը լուսանկարելու նպատակով հանդիպում է շատ հոչակավոր անձանց հետ՝ սկսած Բերտրանդ Ռասսելից մինչեւ Ուինսթոն Չերչիլ, Առնոլդ Թոինբիից մինչեւ Պիկասսո, Սալվադոր Դալի, Սարոյան, Փարաջանով եւ շատ ուրիշներ... Լուսանկարիչը ունի մի քանի հրատարակած գրքեր, որտեղ զետեղվել են լավագույն լուսանկարները: Արա Գյուլերի լուսանկարչական աշխատանքներն իրենց ուրույն տեղն են գտել Փարիզի Ազգային թանգարանում, ԱՄՆ-ում Ոչեստերի Ջորջ Իսթմեն թանգարանում, Նեբրասկայի համալսարանի «Sheldon» հավաքածուում, Քյոլնի Das Imaginaire լուսանկարչական թանգարանում, ինչպես նաեւ Բոստոնի, Չիկագոյի, Նյու Յորքի մասնավոր հավաքածուներում եւ Լյոնվիգ թանգարանում (Cologne): Լուսանկարչի աշխատանքները մի պատկառելի եւ ինքնատիպ հավաքածու էլ կենտրոնացված է Կ. Պոլսի նոր հայկական տանը, որը մի քանի տարի առաջ վերածվեց տուն-թանգարանի, իր գործող «Արա Գյուլեր» սրճարանով, որը ծառայում է նաեւ նշանավոր արվեստագետների հավաքատեղի: Մայր հայրենիքում թանգարան ունենալու գաղափարը նույնպես Արա Գյուլինն է, եւ հարկ է, որ այն իրականանա օր առաջ:

Մ. Մ.

Հ. Պարոնյանի թատրոնը 60 տարեկան է

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի շրջանակներում օգոստոսի 19-ին մեծ շուքով տոնեցին Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի 60-ամյակը:

Հոբելյանական հանդիսության մասին մանրամասն կտեղեկացնենք հաջորդ շաբաթ: **«Ազգն»** էլ միանում է բազմաթիվ շնորհավորանքներին եւ մաղթում թատրոնի ողջ կոլեկտիվին նորանոր ստեղծագործական վերելքներ:

Կարդացեք «Ազգ»-ում

30 տարի առաջ 1974 թ. մահացավ հայ գրականության մեծերից մեկը՝ Շահան Շահնուրը: Նրա մասին շատ է գրվել: «Ազգի» մոտակա համարներում ընթերցողի ուշադրությանը կներկայացնենք եւս մեկ հետաքրքրական հրապարակում սփյուռքահայ գրականագետ Գրիգոր Շահնյանից:

Հիասթափեցնող մեկնարկ

Հավաքականում արմատական փոփոխություններ են անհրաժեշտ

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը նոր գլխավոր մարզչի՝ ֆրանսիացի Բեռնար Կազոնիի գլխավորությամբ բավական անհաջող սկսեց աշխարհի 2006 թ. առաջնության ընտրական մրցաշարը: Վստացնում է ոչ միայն արդյունքը, այլեւ հավաքականի ցուցադրած խաղի ոճակը: ՀՀ հավաքականն իր դժգույն ելույթներից մեկն ունեցավ: Հանդիպումը ցույց տվեց, որ ֆուտբոլիստներից շատերը պարզապես պատրաստ չէին խաղին: Եվ դա բնավ էլ զարմանալի չէ, եթե հաշվի առնենք, որ մեր լեգեոներներից ոմանք բավական ժամանակ իրենց թիմերում խաղադաշտ դուրս չեն գալիս, ուստի խաղային պրակտիկա չունեին: Եվ շատ զարմանալի էր, որ նման ֆուտբոլիստները (Ալբերտ Սարգսյան, Անդրեյ Մովսիսյան) ընդգրկվել էին հավաքականի մեկնարկային կազմում եւ այդպես էլ չկարողացան ոչնչով աչքի ընկնել: Իհարկե, դժվար է մեղադրել գլխավոր մարզչին, որն ընտրական մրցախաղից ընդամենը մեկ շաբաթ առաջ էր ստանձնել հավաքականի ղեկը եւ ծանոթ չէր ֆուտբոլիստների խաղային ունակություններին: Կազմի ընտրության հարցում նրան պետք է օգնեին տեղի մասնագետները: Կարծում ենք, ժամանակն է հրաժարվել «Եթե լեգեոներ ես, պիտի խաղաս հավաքականում» որդեգրած սկզբունքից: Հարկ է հաշվի առնել տվյալ պահին լեգեոներների մարզավիճակը, խաղային պրակտիկայի առկայությունն ու այլ գործոններ: Դեռեւս անցյալ ընտրական մրցաշարը ցույց տվեց, որ «հին գվարդիայի» վրա հույս դնելն իրեն չի արդարացնում, հավաքականում արմատական փոփոխություններ են անհրաժեշտ: Կարծում ենք, նպատակահարմար կլիներ հավաքականում կրկին ընդգրկել «Միկայի» հարձակվող Արմեն Շահգելդյանին, որն առաջնությունում իրեն գերազանց է դրսեւորում՝ լավ համագործակցելով իր երիտասարդ խաղընկերոջ՝ Դավիթ Գրիգորյանի հետ: Այս երկյակը խաղադաշտում մեր հավաքականի գործողություններում սություն կմտցներ, ինչը, ցավոք, բացակայում էր մեկնարկային խաղում:

Ոմանք, իհարկե, կարող են մատնացույց անել կազմի հետ կապված որոշ դժվարությունները (Ռոման Բերեզովսկու, Արման Քարամյանի, Արթուր Ոսկանյանի բացակայությունը): Սակայն պետք է փաստենք, որ Բերեզովսկուն փոխարինած Համբարձումյանն իրեն լավ դրսեւորեց եւ մի քանի դրվագներում պարզապես թիմին փրկեց վերահաս գոլերից, այլապես մեր ֆուտբոլիստներն ավելի խոշոր ու խայտառակ հաշվով կպարտվեին: Ցավալին այն է, որ մակեդոնացիներն իրենց խաղամակարդակով բնավ էլ չէին գերազանցում մեր հավաքականին եւ ողջ հանդիպման ընթացքում պարզունակ ու միջին մակարդակի խաղ ցուցադրելով, այնուամենայնիվ, հմտորեն օգտագործեցին պաշտպանությունում թույլ տրված սխալներն ու խոշոր հաշվով հաղթեցին:

Հայաստանի հավաքականի մեկնարկն իրոք հիասթափեցնող էր: Ողջ հանդիպման ժամանակ այդպես էլ մեր ֆուտբոլիստներին չհաջողվեց լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին: Փաստորեն, ընդամենը մեկ դիպուկ հարված կասարվեց, այն էլ դիպավ դարպասածողին: Բավական պասսիվ էր հավաքականի առաջատար Արթուր Պետրոսյանը, որի գործողություններում հոգնածություն էր զգացվում: Այդպես էլ հավաքականում չգտնվեց մեկը, որ կարողանար իր վրա վերցնել խաղը, խաղընկերոջը գոհի առաջնորդեր: Այդպես էլ ականատես չեղանք մտածված ու սուր կոմբինացիաների: Մեր ֆուտբոլիստները, չգիտես ինչու, հիմնականում փորձում էին կենտրոնով ճեղքել մրցակցի պաշտպանությունը, ինչն այդպես էլ նրանց չհաջողվեց: Նման խաղով, իհարկե, դժվար էր հաջողություն ակնկալել:

Ընթացիկ մրցաշրջանում մեր հավաքականին դեռեւս ընտրական չորս հանդիպումներ են սպասում, որոնց պետք է նախապատրաստվել ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ: Այլապես տարեվերջին մեր ընտրանին կարող է հայտնվել առաջին խմբի հետնապահների թվում: Հայ ֆուտբոլասերը վաղուց ի վեր կարոտ է միջազգային ասպարեզներում մեր թիմերի հաղթանակներին: Բոլորովին վերջերս մեր ակումբները եվրոգավաթներում հերթական անգամ իրենց անփառունակ ելույթներով հիասթափեցրին ֆուտբոլասերներին: Այժմ էլ դառնության հերթական չափաբաժինը ստացանք հավաքականի ելույթից: Ժամանակն է սթափվելու եւ արժանավայել խաղ ցուցադրելու: Իսկ ֆուտբոլասերների համբերությունն արդեն սպառվում է:

Ընտրական առաջին խմբում կայացավ եւս մեկ հանդիպում: Ռումինիայի հավաքականը Բուխարեստում 2-1 հաշվով հաղթեց Ֆիններին: Հաշիվը 50-րդ րոպեին բացել է Ադրիան Մուտուն, իսկ խաղի վերջին րոպեին Պետրեն 2-րդ գնդակն է խփել: Ավելացված ժամանակում Երյոմենկոն 11 մ հարվածով կրճատել է հաշվի տարբերությունը: Ընտրական 3-րդ խմբում գրանցվել են հետեւյալ արդյունքները. Սլովակիա-Լյուքսեմբուրգ՝ 3-1, Լիխտենշտեյն-Էստոնիա՝ 1-2: ՀՀ հավաքականի մյուս երկու մրցակիցներն ուժերը չափեցին ընկերական մրցախաղում: Չեխերը սեփական հարկի տակ ոչ-ոքի (0-0) խաղացին Եվրոպայի նորընծա չեմպիոն հույների հետ, իսկ Հոլանդիայի ընտրանին հյուրընկալվելիս ոչ-ոքի (2-2) ավարտեց հանդիպումը շվեդների հետ:

Մակեդոնիա-Հայաստան՝ 3-0 (2-0)

Սկոպիե, քաղաքային մարզադաշտ, 18 օգոստոսի:

Մրցավար՝ Անտոն Ժենով (Բուլղարիա):

Մակեդոնիա- Պետար Միլոշեւսկի, Գորան Ստավրեւսկի, Միլե Կրստեւ, Գոչե Սեդլովսկի, Իգոր Միտրեսկի, Ալեքսանդր Միտրեսկի, Վանչո Տրոյանով, Վելիչե Շումուլիկոսկի, Գորան Պանդեւ, Արտիմ Շաֆիրի (Գոչե Տոլեսկի, 86), Դրագան Դիմիտրովսկի:

Հայաստան- Արմեն Համբարձումյան, Եղիշե Մելիքյան, Կարեն Դոխոյան (Ալեքսանդր Թադեւոսյան, 83), Սարգիս Հովսեփյան, Հարություն Վարդանյան, Ռոմիկ Խաչատրյան (Կարեն Ալեքսանյան, 46), Արթուր Պետրոսյան (Արա Հակոբյան, 66), Ռաֆայել Նազարյան, Ալբերտ Սարգսյան, Արտավազդ Քարամյան, Անդրեյ Մովսիսյան:

Գոլերը՝ Պանդեւ (5), Շաֆիրի (38), Շումուլիկոսկի (90):

Զգուշացվեցին Կրստեւը, Նազարյանը, Շումուլիկոսկին, Սարգսյանը, Ստավրեւսկին: 70-րդ րոպեին հեռացվեց Վարդանյանը:

Երիտասարդականն էլ խայտառակ պարտություն կրեց

Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականն էլ չափազանց անհաջող մեկնարկեց Եվրոպայի երիտասարդական առաջնության ընտրական մրցաշարում: Մեր հավաքականը 0-4 հաշվով զիջեց Մակեդոնիայի իր հասակակիցներին: Ճիշտ է, հարկ է խոստովանել, որ մեր թիմում հիմնականում 17-19 տարեկան ֆուտբոլիստներ հանդես եկան: Փաստորեն, դա ավելի շուտ մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականն էր: Մակեդոնացիներից այդ խաղում աչքի ընկավ Ստոյկովը՝ դառնալով «հեթ-տրիկի» հեղինակ: Առաջին խաղակեսում նա 29-րդ եւ 31-րդ րոպեներին գրավեց մրցակցի դարպասը, իսկ խաղավարից երկու րոպե առաջ իրացրեց 11 մ հարվածը: 47-րդ րոպեին աչքի ընկավ Տոդորցեւը:

Մեր երիտասարդականի պարտությունը սպասելի էր: Միայն վերջին պահին, հանպատրաստից հավաքագրված թիմը, որի գլխավոր մարզիչ էր նշանակված Վարդան Մինասյանը, չէր կարող պատասխանատու խաղում հաջող հանդես գալ: Առանց լուրջ նախապատրաստության հաջողություն ակնկալել հնարավոր չէ: Մեր հավաքականը մեկնարկային խաղում հանդես է եկել հետեւյալ կազմով. Արմեն Խաչատրյան, Կարեն Յայլոյան, Մխիթար Գրիգորյան, Ռոբերտ Արզումանյան, Արմեն Տիգրանյան (Սուրեն Սարգսյան, 46), Արարատ Առաքելյան, Ալեքսանդր Պետրոսյան, Ժորա Հովհաննիսյան, Լեւոն Փաչաջյան, Վահե Դավթյան (Արտակ Օսեյան, 60), Սամվել Մելքոնյան: Մեր թիմից զգուշացվել են Առաքելյանն ու Խաչատրյանը:

Ռումինիայի ընտրանին 1-0 հաշվով հաղթել է Ֆիններին: Ընտրական 3-րդ խմբում Սլովակիայի երիտասարդական հավաքականը նույն հաշվով պարտության է մատնել Լյուքսեմբուրգի ընտրանուն:

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԵՇՆԵՐՈՒՄ

Լավագույնն առայժմ Նորայր Բախտամյանի արդյունքն է

Շուրջ մեկ շաբաթ Աթենքում տարբեր մարզաձեւերի ներկայացուցիչները համառ ու անզիջում պայքար են մղում ամառային 28-րդ օլիմպիական խաղերի մեդալների համար: Հայաստանը համաշխարհային սպորտի այդ խոշորագույն ստուգատեսում ներկայացնում են 18 մարզիկներ: Առայժմ մեր օլիմպիականներին չի հաջողվել դառնալ մրցանակակիր: Հաջողությանը բոլորից շատ մոտ էր հրաձիգ Նորայր Բախտամյանը: Առաջին անգամ օլիմպիական մրցաստարեզ դուրս եկած հայ հրաձիգն ազատ ատրճանակի 50 մ մրցաձետում համառ պայքար մղեց բրոնզե մեդալի համար, սակայն, ցավոք, երեք կրակահերթում ոչ այնքան դիպուկ կրակոցների պատճառով ի վերջո զիջեց չին մարզիկին՝ բավարարվելով 4-րդ տեղով: Իսկ մի քանի օր առաջ Բախտամյանն օդամուղ ատրճանակի 10 մ մրցաձետում զբաղեցրել էր 7-րդ տեղը:

Ծանրոցն Արմեն Ղազարյանը մրցման պահին:

Անհաջող էր ձյուդոյիստ Արմեն Նազարյանի ելույթը: Մինչեւ 60 կգ քաշային կարգում Արմենը նախ հաղթեց բրազիլացի ձյուդոյիստին, սակայն հաջորդ գոտեմարտում զիջեց իրանցի Մասուդ Հաջի Ախվոն Չադեին եւ կամերունցի ժան Կլոդ Կամերունին ու դուրս մնաց հետագա պայքարից:

Անհաջող ելույթ ունեցավ նաեւ թենիսիստ Սարգիս Սարգսյանը: Առաջին իսկ խաղում նա զիջեց խորվաթ Կրուբիչիչին (3-6, 4-6) եւ դուրս մնաց հետագա պայքարից:

Ծանրամարտի մրցումներում Հայաստանը ներկայացնող չորս ծանրոցներից առաջինը մրցահարթակ դուրս եկավ Արմեն Ղազարյանը: 60 կգ քաշային ծանրոցը, որը սովորաբար հանդես էր գալիս մինչեւ 69 կգ կարգում, երկամարտի 295 կգ (135+160) արդյունքով գրավեց 5-րդ տեղը: Արմենը երկու վարժություններում իրենց հաստատված վեց մոտեցումներից միայն երեքում կարողացավ հաղթահարել ծանրությունը:

Հոտախոսություն մեզ, հաջող մեկնարկեց մեր միակ բռնցքամարտիկը՝ Ալեքսան Նալբանդյանը: Փորձառու բռնցքամարտիկի առաջին մրցակիցը 48 կգ քաշային ֆրանսիացի Ռեդոն Ադոն էր, որի հետ այս մրցաշրջանում կայացած երկու մենամարտում էլ հաղթել էր հայ մարզիկը: Այս անգամ եւս Ալեքսան Նալբանդյանն իրեն գերազանց դրսեւորեց: Առաջին ռաունդը տանուլ տալով 4-7 հաշվով, Ալեքսանն ասիճանաբար տիրեց նախաձեռնությանը եւ դիպուկ հարվածների շնորհիվ միավորներ վաստակելով, վստահ հաղթանակ տոնեց (27-20): Վաղը մեր բռնցքամարտիկը կմրցի իրաքցի Հալիլ Նաջանի հետ:

Դոպինգային առաջին սկանդալը

Աթենքի օլիմպիադայում դոպինգային առաջին սկանդալը գրանցվեց: ՄՕԿ-ի ներկայացուցիչները հրապարակել են այն 5 ծանրոցների ազգանունները, որոնց դոպինգ-ստուգումը դական արդյունք է տվել: Նրանք են մոլդովացի Վիկտոր Կիսլյան, մարոկկացի Վաֆա Ամոուին, հունգարացի Զոլթան Կեցկեսը, հնդիկ Տրաշիմա Կումարի Նան եւ թուրք ծանրոցուհի Սուլե Շաբազը: Եթե առաջին չորսն առաջատար ծանրոցների թվին չէին պատկանում, ապա Սուլե Շաբազն աշխարհի վերջին առաջնությունում մինչեւ 75 կգ մարզուհիների պայքարում գրավել էր 5-րդ տեղը եւ պատրաստվում էր Աթենքում պայքար մղել մրցանակային տեղերի համար: Այնպես որ, թուրքերը զրկվեցին մեդալ շահելու հնարավորությունից: Նշենք, որ ծանրամարտի մրցումներում թուրքերը նվաճել են 2 ոսկե եւ մեկ բրոնզե մեդալ ու այս ցուցանիշով զիջում են միայն չին մարզիկներին (3-ական ոսկե եւ արծաթե մեդալ): Չինաստանին 3-րդ ոսկե մեդալը պարգեւեց Չժան Գոտչժենը, որը մինչեւ 69 կգ քաշային մրցավեճում հաղթող ճանաչվեց երկամարտի 347,5 կգ (160+187,5) արդյունքով: 2-րդ տեղը գրավեց կորեացի Լի Բի Յունը՝ 342,5 կգ (152,5+190), բրոնզե պարգեւին տիրացավ խորվաթիան ներկայացնող Փեշալովը՝ 337,5 կգ (150+187,5):

Կանանց մինչեւ 63 կգ քաշային կարգում հաջողությունն ուղեկցեց նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունների ներկայացուցիչներին: Չեմպիոնի ոսկե մեդալին արժանացավ ուկրաինուհի Նատալյա Սկակունը՝ 242,5 կգ (107,5+135): Նույնպիսի արդյունք ցույց տվեց բելառուսացի Աննա Բաշյուչկոն, որը չեմպիոնուհուն զիջեց անձնական ավելի ծանր քաշի պատճառով: Բրոնզե մեդալը նվաճեց բելառուսացի մեկ այլ ծանրոցուհի՝ Տատյանա Սուկալովան՝ 222,5 կգ (100+122,5): Նշենք, որ ծանրամարտում արդեն գրանցվել է աշխարհի 2 ռեկորդ: Մինչեւ 48 կգ կանանց մրցապայքարում թուրք Նուրկան Թայլանը պոկեց 97,5 կգ ծանրածողը, իսկ երկամարտում ցույց տվեց 210 կգ արդյունք:

Չինաստանի պատվիրակների գերազանց ելույթները

Ամառային 28-րդ օլիմպիական խաղերում առայժմ առավել հաջող են հանդես գալիս չին մարզիկները: Նրանցից 12-ը դարձել են օլիմպիական չեմպիոններ, եւս 8-ը նվաճել են արծաթե, 5-ը՝ բրոնզե մեդալներ: Ընդհանուր մեդալների թվով լավագույնը ԱՄՆ-ի պատվիրակների ցուցանիշն է՝ 29 պարգեւ: Ընդհանուր առմամբ օլիմպիական պարգեւների են արժանացել 45 երկրների ներկայացուցիչներ: Ցավոք, առայժմ այդ ցանկում նշված չէ Հայաստանը: Իսկ ահա մեր անմիջական հարեւաններն արդեն հասցրել են վայելել հաղթանակի բերկրանքը: Վրաստանի մարզիկները նվաճել են մեկական ոսկե եւ արծաթե մեդալ, իսկ ադրբեջանցիներն ունեն 2 բրոնզե պարգեւ:

Ներկայացնում ենք մեդալների թվով լավագույն տասնյակի ցուցանիշները: Նկատենք, որ հաշվարկը կատարվում է ելնելով ոսկե մեդալների թվից:

	Ո	Ա	Բ	Ընդ.
1. Չինաստան	12	8	5	25
2. ԱՄՆ	10	10	9	29
3. Ճապոնիա	8	3	2	13
4. Ավստրալիա	6	4	6	16
5. Ուկրաինա	5	1	1	7
6. Գերմանիա	4	2	5	11
7. Ռուսաստան	3	7	7	17
8. Իտալիա	3	4	2	9
9. Ֆրանսիա	3	3	5	11
10. Հար. Կորեա	2	6	3	11

Հաղթանակ՝ աշխարհի նոր ռեկորդներով

Շարժվող թիրախին օդամղիչ հրացանից 10 մ-ից կրակահերթում իր հավասարը չունեցավ գերմանացի հրաձիգ Մանֆրեդ Կուրցերը: Դեռեւս որակավորման փուլում նա բոլորից դիպուկ էր եւ աշխարհի նոր ռեկորդ սահմանեց (590 միավոր): Եզրափակիչ մրցափուլում էլ գերմանացի հրաձիգն աչքի ընկավ դիպուկ կրակոցներով եւ դարձյալ հաղթող ճանաչվեց աշխարհի նոր ռեկորդով (682,4 միավոր): 2-րդ եւ 3-րդ մրցանակակիր դարձան ռուսաստանցիներ Ալեքսանդր Բլինովը (678 միավոր) եւ Դմիտրի Լիկինը (677,1):

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

«Եթե հայերը ցանկանան, կարող են գրավել ողջ Ադրբեջանը»

Սկիզբը՝ էջ 1

Դեռ 92 թ. հունիսին, պնդում է Կազիմիրովը, հնարավորություն էր ստեղծվել ռազմական գործողությունները դադարեցնելու ռազմաճակատի գծի երկայնքով եւ բացելու ԵԱՀԿ Մինսկի կոնֆերանսը, սակայն Աբուլֆազ Էլչիբեյը նախապայման դրեց. հայերը նախ պետք է հեռանան Շուշիից եւ Լաչինից: Մայիսի 8-ին, ապա եւ 18-ին ղարաբաղյան ուժերն ազատագրել էին Շուշին, վերահսկողության տակ վերցրել Լաչինի միջանցքը՝ ապահովելով Հայաստան-Ղարաբաղ ցամաքային կապը:

Կազիմիրովը, որ 47 անգամ միջնորդական առաքելությամբ եղել է տարածաշրջանում, հիշում է, որ 92 թ. հուլիսին ղարաբաղյան կողմը համաձայնություն տվեց դադարեցնել կրակը, սակայն Էլչիբեյը համառում էր եւ միայն 93-ի գարնանը, երբ ղարաբաղյան ուժերը վերահսկողության տակ առան Քելբաջարը, Բաքվի թուրքերն կառավարությունը հրադադարի համաձայնություն տվեց:

Ավելորդ չէ հիշեցնել, որ Էլչիբեյը ժամանակին խոստանում էր իր ոտքերը լվանալ Սեւանի ջրերում: Հիշեցնենք նաեւ, որ 92 թ. ամռանը ադրբեջանական զինված խմբավորումները գրավել էին Ղարաբաղի տարածքի գրեթե կեսը:

93-ի հունիսին Ռուսաստանի միջնորդությամբ ադրբեջանցիներն ու ղարաբաղցիներն ուղղակի բանակցություններ սկսեցին, որոնց ժամանակ դադարեցվեց կրակը: Սակայն Բաքվում ռազմական եւ պետական հեղաշրջման հետեւանքով իշխանության եկած Հեյդար Ալիեւը ցանկություն ուներ կորցրածը հետ բերել ռազմական ճանապարհով: Կրկին ադրբեջանցիները սկսեցին մերժել բանակցությունների ճանապարհով դարաբաղյան հարցի կարգավորումը: Հուլիսի 23-ին ղարաբաղյան ուժերը վերահսկողության տակ վերցրին Աղդամը, շրջակա բնակավայրերը, ռազմավարական նշանակության մի շարք բարձունքներ, որից հետո միայն դադարեցվեցին Ստեփանակերտի ռմբահարումները:

Չնայած ռազմական ակնհայտ առավելությանը, ղարաբաղյան կողմը հուլիսի 24-ին, այսինքն՝ Աղդամը գրավելու հաջորդ օրը, ռուսների միջնորդությամբ կրկին համաձայնություն տվեց դադարեցնելու ռազմական գործողությունները եւ հրադադար հաստատելու: Ադրբեջանը սկզբում մի քանի օր պահպանեց հրադադարը, սակայն հետագայում խախտեց, ինչի հետեւանքով 93-ի օգոստոսին ղարաբաղյան ուժերը վերահսկողության տակ առան Ֆիզուլին, Ջեբրայիլը եւ Ղուբաթլուն:

93-ի աշնանը Հեյդար Ալիեւի եւ Ռոբերտ Քոչարյանի միջեւ Մոսկվայում տեղի ունեցան գաղտնի երկու հանդիպումներ: Այդ ընթացքում Ալիեւը զբաղված էր նաեւ ներքին խնդիրներով. նա օրինականացրեց մի քանի ամիս առաջ իրականացված ռազմաքաղաքական հեղաշրջման արդյունքները եւ հաստատվեց Ադրբեջանի ղեկավարի պաշտոնում: Երդմնակալությունից մի քանի օր հետո ադրբեջանական զինված խմբավորումները վերսկսեցին ռազմական գործողությունները: Ջմռանը ադրբեջանական բանակի լայնածավալ հարձակման հետեւանքով (Քելբաջարի ուղղությամբ) սպանվեցին հարյուրավոր հայ զինվորներ: Բայց ձախողությունը կարճ տեւեց: Ղարաբաղյան ուժերն անցան լայնածավալ հակահարձակման, եւ Ադրբեջանը մի քանի օրվա ընթացքում կորցրեց առնվազն 2000 զինվոր:

1994 թ. ապրիլին ղարաբաղյան ուժերը պատրաստ էին գրավել Թարթառը, Բարդան, Գյանջան եւ դուրս գալ Վրաստանի սահման: Ադրբեջանցիներն ստիպված էին հրադադար հաստատել, ինչը տեղի ունեցավ մայիսին, Բիշքեկում: Ստորագրված այս հրադադարը որոշ խախտումներով պաշտպանվում է մինչեւ այսօր:

Ի դեմ, 93 թ. ամերիկյան հեղինակավոր «Բոստոն Գլոբ» օրաթերթը մի հրապարակում էր նվիրել ղարաբաղյան խնդրին: Թերթի թղթակիցն այդ հրապարակման մեջ մեջբերում է ադրբեջանական բանակի մայոր Մամեդովի խոսքերը, որն այսպես է ներկայացնում իրավիճակը Հայաստանի եւ Ղարաբաղի դեմ պատերազմող Ադրբեջանում. «Եթե հայերը ցանկանան, կարող են գրավել ողջ Ադրբեջանը»:

Բաքվի իշխանությունների ռազմատենչ հայտարարությունները չպետք է անուշադրության մատնել: Այն պահին, երբ Ադրբեջանը վստահ կլինի Ղարաբաղի հարցը զենքով լուծելու հնարավորությանը, պատերազմ կսկսի: Համենայն դեպս, 91-94 թթ. իրադարձությունները հենց դա են փաստում:

ՀՈԳԵՎՈՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գետրգյան հոգեւոր ճեմարանում օգոստոսի 23-30-ը կանցկացվեն ընդունելության քննություններ

Սուրբ Էջմիածնի Գետրգյան հոգեւոր ճեմարանում (Աստվածաբանական համալսարան) ավարտվել է հուլիսի 11-ից սկսված հայտերի ընդունումը: Ճեմարանի քարտուղարության տվյալներով, հոգեւոր կրթօջախն ունի 80 դիմորդ:

Գիշերօթիկ ուսումնական այս հաստատությունում, որի համակարգի մեջ մտնում են ճեմարանը, Սեւանի Վազգենյան դպրանոցը եւ Շիրակի Գյումրու ընծայարանը, ուսուցումը սպացիոնար է եւ անվճար, կարող են ընդունվել Հ�հ եւ արտասահմանյան երկրների մինչեւ 21 տարեկան քաղաքացիներ, որոնք ունեն միջնակարգ կամ բարձրագույն կրթություն: Նշենք, որ այս տարի արտերկրից հայտեր չեն սպացվել:

Հոգեւոր 3 կրթօջախների քննությունները կսկսեն օգոստոսի 23-ից, դրանք կանցկացվեն միաժամանակ՝ Գետրգյան ճեմարանի շենքում եւ կավարտվեն օգոստոսի 30-ին: Դիմորդներն այս տարի կհանձնեն գրավոր քննություններ հայոց լեզվից եւ հայոց պատմությունից, բանավոր՝ հայ գրականությունից, անգլերեն լեզվից, ինչպես նաեւ երաժշտությունից՝ երգեցողություն, լսողական ընդունակություն, ռիթմի զգացողություն: Նրանց գիտելիքները կստուգվեն միջնակարգ ուսուցման ծրագրերի շրջանակներում, պատասխանները կգնահատվեն 10 բալանոց համակարգով, որեւէ առարկայից 5-ից ցածր բալ սանալու դեպքում դիմորդը քննությունները չի շարունակի:

Ըստ քարտուղարության, արդեն ձեւավորվել են առարկայական հանձնաժողովները, որոնք հաստատել է Ամենայն հայոց կաթողիկոսը:

ԱՌԱՋԻՆ ԼՈՒՐԸ՝
ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔՈՎ

Ուզո՞ւմ եք ամենավերջին իրադարձություններին եւ օրվա մամուլի հրապարակումներին ծանոթանալ ամենաառաջինը
Ուզո՞ւմ եք լսել բազմակողմանի վերլուծություն եւ անաչառ մեկնաբանություն

Հետեւեք
Հայաստանի Հանրային ռադիոյի
«Ռադիոլուր» եւ «Ռադիոպրես»
լրատվական-վերլուծական ծրագրերին ամեն օր՝ ուղիղ եթերում
ժամը **6.00, 8.00, 10.00, 11.00, 12.00, 13.00, 14.00**
15.00 (հայերեն եւ ռուսերեն տարբերակներով),
17.00, 18.00, 22.00, 23.00
«Ռադիոպրեսը» օրվա մամուլի տեսությամբ եթերում է ժամը
10.30-ին

18.00-ին Հիմնական թողարկումը
Օպերատիվ լրատվություն
Բազմակողմանի վերլուծություն
Անաչառ մեկնաբանություն
Հյուր ուղիղ եթերում
Լրագրողական հետաքննություն
Մամուլի տեսություն **«Ռադիոպրես»**

Մեզ տարբեր ժամերի կարող եք լսել
62. 215. 1282 մետր ալիք, **FM 102** եւ **FM 107.6**,
4,3 մետր ԳԿԱ ռադիոկայաններով, քաղաքային լարային ցանցով,
ինտերնետով. www.armradio.am

Երեւանի «Գիտակ» համալսարանի «Թիկնապահ» ֆոլեջ
Կարդալ **TV ալիք**
շաբաթաթերթի
վերջին էջում

FOR YOUR INTERNAL NEWS OF ARMENIA LOG ON TO
www.azg.am
IN ARMENIAN, RUSSIAN, ENGLISH AND TURKISH

«Ինն-գրուպ» ՍՊԸ ոիելտորական ընկերությունը կրկին տեղեկացնում է, որ Երեւանի «Ադամանդ» արդանիահումային բոլորայի հարթակում ամուրային վաճառքի է ներկայացված «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ին վաճառքի իրավունքով պատկանող գույքը՝
- Երեք սենյականոց բնակարան (ընդ. մակերեսը՝ 80.1 մ)
Հասցե՝ ք. Երեւան, Ա. Խաչատրյան 31, բն. 22:
Գույքի մեկնարկային գինը՝ 20.000 դոլարին համարժեք դրամ:
Ամուրը՝ դասական փոկերով, յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, ժ. 13:00, մինչեւ ս. թ. դեկտեմբերի 30-ը, ք. Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցեով:
Տեղեկությունների համար դիմել «Ինն-գրուպ» ընկերություն:
Հեռ.՝ 56 52 28 կամ 56-31-15, 56-48-83:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

«Ազգ» օրաթերթի արձակուրդի օրերին հաճելի իրադարձություններ կատարվեցին մեր մի քանի աշխատակիցների հետ:

Համակարգչային աշխատակցուհի Մարիամ եւ բժիշկ Հարություն Տանիելյանների ընտանիքում ծնվեց երկրորդ մանչ զավակը՝ Վարուժանը:

Օրաթերթի ինտերնետային էջի ռուսերենի թարգմանչուհի Իրինա Կարապետյանն ունեցավ իր անդրանիկ թոռնուհուն՝ Մարիային:

Ջերմագին մաղթանքներով շնորհավորենք նորածիններին ու նրանց հարազատներին՝ երջանիկ ապագայի ակնկալիքով:

до 31 августа
UNIBANK
ВКЛАД ОЛИМПИЙСКИЙ
9
12 месяцев
% ГОДОВЫХ
от 1000 USD
ежемесячная капитализация или выплата процентов

СТАНДАРТНЫЕ ВКЛАДЫ В ДРАМАХ И ВАЛЮТЕ

Срок вклада	Выплата процентов	AMD	USD, EURO
		До 5 млн.	До 10.000
до востребования		0*	0*
31 - 90 дней	в конце срока	7,5	5,5
	ежемесячно	7	5
91 - 182 дня	в конце срока	8	6,5
	ежемесячно	7,5	6
183 - 364 дня	в конце срока	8,5	7,5
	ежемесячно	8	7
365 - 550 дня	в конце срока	9	8
	ежемесячно	8,5	7,5

Вклады превышающие 5 млн. AMD или 10 тыс. USD, EURO и/или сроком более 550 дней - по индивидуальным ставкам.
* в отдельных случаях процентная ставка определяется на договорной основе
Минимальная сумма срочных депозитов
50.000 AMD
100 USD, EURO

ЮНИБАНК
РЕАЛЬНЫЕ ИНВЕСТИЦИИ
53 98 70
www.unibank.am

АДРЕСА ФИЛИАЛОВ ЗАО "ЮНИБАНК"

Центральный офис
г. Ереван, ул. Амиряна 12
тел. (3741) 539870
e-mail: unibank@unibank.am

Филиалы в г. Ереване:
Филиал "КЕНТРОН"
ул. Абовяна 26
тел. (3741) 542431
Филиал "МАЛАТИЯ"
ул. Себастия 141
тел. (3741) 776627
Филиал "КОМИТАС"
ул. Комитаса 15/2
тел. (3741) 261838

Филиалы в Армении:
Филиал "ВАНАДЗОР"
г. Ванадзор, ул. Тигран Мец 53
тел. (37451) 40872
Филиал "ГЮМРИ"
г. Гюмри, ул. Ахтанаки 1
тел. (37441) 33055

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 56-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 19.08.2004 Գինը՝ 100 դրամ